

ՎԱԼԼԵՔՍ ԳՐՈՒՊ
Սեպտեմբեր 2021

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՐԿՄԱՆ
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ և ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Վալլեքս խմբի Ընտրությունների Վերլուծական
Փաստաթուղթ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	Էջ 3
II. ՀԱՆՔԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	Էջ 6
III. ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ	Էջ 12
1. <u>ՈՌՅԱԼԹԻՆԵՐ</u>	Էջ 14
2. <u>ԱՅԼ ՀԱՐԿԵՐ - ՀԱՆՔԱՅԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՐԿ (Mineral rent tax))</u>	Էջ 20
3. <u>ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԵԿԱՄՏԱՀԱՐԿ CIT (Շահութահարկ)</u>	Էջ 21
4. <u>ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐ</u>	Էջ 23
IV. ԲԵՅՁ ՄԵԹԼՁ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԿՄԱՆ ԲԵՌԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ	Էջ 25
V. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ	Էջ 29
VI. ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՀԱՆՔԵՐԻ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ CIMVAL-ի ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԸ ԵՎ ՈՒՂԵՑՈՒՅՑԵՐԸ.....	Էջ 32
VI. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	Էջ 37

ՆՊԱՏԱԿԸ: Ներկայացնել հարկման տեսանկյունից մետաղական հանքագործության ոլորտի առանձնահատկությունները, ինչպես նաև միջազգային պրակտիկայում գործող հարկման ռեժիմները: Նյութի կազման համար հիմք է հանդիսացել ոլորտում մասնագիտացված տարբեր կառույցների կողմից հրապարակված վերլուծական և տեղեկատվական փաստաթղթերը, որի սպառիչ ցանկը ներկայացված է սույն նյութի վերջում:

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանքագործության ոլորտում հարկման մեխանիզմների կամ “ֆիսկալ ռեժիմների” մասին խոսելիս միջազգայն գրականությունը տալիս է պարզ սահմանում. Ֆիսկալ Ռեժիմը վերաբերում է նրան, թե օգտակար հանածոներ արդյունահանող երկրներում կառավարություններն ինչպես են **կիրառվող մի շարք գործիքների միջոցով** որոշում հանքարդյունաբերական նախագծերից ստացվող եկամուտների բաշխումը պետության և ներդրողների միջև:

Որպես համընդհանուր ընդունված կանոն, երկրի ընդերքում գտնվող օգտակար հանածոների պաշարները հանդիսանում են պետական սեփականություն, սակայն քանի դեռ դրանք գտնվում են ընդերքում և չկա դրանց վերաբերյալ արդյունահանման նախագծեր կամ գործընթացներ, վերջիններս երկրի հարստության կամ ֆինանսական տեսանկյունից էական արժեք չեն ներկայացնում: Իսկ քանի որ ցանկացած երկրի կառավարության վերջնական նպատակը երկրի բարեկեցության բարձրացումն է, ուստի դասական տրամաբանությամբ, կառավարությունները շահագրգռված են լինում ընդերքում եղած հարստությունը վերածելու իրական արժեքի՝ հաշվեկշռելով շրջակա միջավայրի ռիսկերը:

Երկրների փորձը ցույց է տալիս, որ օգտակար հանածոների արդյունահանմամբ սովորաբար կառավարություններն ինքնին չեն զբաղվում՝ ոլորտում բավարար գիտելիքների և փորձի բացակայության պատճառով, փոխարենը որոշակի գործիքակազմի՝ հարկման համակարգերի օգնությամբ, ստեղծում են պայմաններ շահագրգռելու ոլորտում մասնագիտացված ընկերություններին զբաղվելու դրանով՝ մասհանելով իրեն իր հասանելիքը որպես տվյալ ակտիվի սեփականատեր¹: Եվ այստեղ է ի հայտ գալիս հարցը, թե կառավարությունը, որպես ընդերքի սեփականատեր, ինչ պայմաններ է առաջարկում ներդրողին, որպեսզի հաշվեկշռի իր՝ որպես ընդերքի

¹ Սա նաև բացատրվում է նրանով, որ կառավարությունները որպես կանոն այլ շարժառիթներ և շահեր ունեն, քան մասնավորը և որպեսզի ընդերքի օգտագործումից քաղած օգուտները հասարակության համար լինեն մաքսիմալ, երկրները սովորաբար օգտվում են Պետություն- սեփականատեր Մասնավոր- ընդերք շահագործող մոդելից, որի պարագայում յուրաքանչյուր կողմ իր շահերով և շարժառիթներով իրենց դերակատարությունը փորձում են անել առավելագույն կերպով, որի պայմաններում երկրի քաղած օգուտները հասնում են առավելագույնի:

սեփականատիրոջ և ներդրողի, որպես հանրային բարիքն արդյունահանողի, դրանից օգտվողի և շահույթ ստացողի շահերը:

Ցանկացած երկրի զարգացման հեռանկարի վրա ահռելի ազդեցություն կարող է ունենալ այն հանգամանքը, թե տվյալ երկիրն ինչպես է կառավարում իր հանքային ռեսուրսները: Երկրների փորձը ցույց է տալիս, որ թեև հանքարդյունաբերությունը բերում է էական ոչ ֆինանսական օգուտներ ևս (օրինակ, զբաղվածություն, ենթակառուցվածքների բարելավում, հանքարդյունաբերության և տնտեսության այլ սեգմենտների միջև կապ և այլն), այդուամենայնիվ, շատ երկրներում հանքարդյունաբերության ոլորտից ստացվող ամենամեծ պոտենցիալ օգուտը երկրների կառավարությունները համարում են բնական պաշարների տիրապետումից և օգտագործումից ստացվող **եկամուտները**: Այդպիսի եկամուտները կառավարություններն ապահովում են հարկերի և տարբեր տեսակի վճարների գանձման միջոցով:

Երկրների փորձը ցույց է տալիս նաև, որ արդյունահանումից ստացվող եկամուտների բաշխման մեխանիզմների մասով մոտեցումները տարբեր են լինում՝ կախված նրանից, թե ինչ խնդիր և հեռանկար է դնում իր առջև տվյալ երկրի կառավարությունը (ընդերքօգտագործման ոլորտում նոր նախագծերի խթանում, հանքարդյունահանման հետագա շղթայի՝ վերամշակման օղակների զարգացում, եկամուտների գեներացում և այլն): Այս տեսանկյունից կարևորվում է ոչ թե մեկ հարկատեսակի կամ գանձվող վճարի չափը, այլ կառավարության կողմից գանձվող համընդհանուր մասնաբաժնի (Government Take) կամ համընդհանուր հարկման համակարգի դիզայնը: Ֆիսկալ գործիքները, որոնց օգնությամբ կառավարությունները վերցնում են իրենց մասնաբաժինը ընդերքի օգտագործումից և վաճառքից հետևյալն են.

- **Ռոյալթիներ (Mining Royalties)** – գանձվում են որպես արտադրության ֆիզիկական ծավալից կամ համախառն եկամտից տոկոս;
- **Եկամուտների կամ շահույթի վրա հիմնված հարկեր (Income or profit based tax)** - հիմնականում շահութահարկ (CIT); և
- **Հանքանյութի վարձակալության հարկ (Mineral rent tax)** - հարկեր, որոնք ուղղված են ներդրողների շահույթների գերազանցման դեպքում պետությանը լրացուցիչ մասհանումներ կատարելուն:

Ամեն դեպքում, այս կամ այն հարկման ռեժիմը և դրան համապատասխան գործիքակազմ սահմանելիս կառավարությունները հաշվի են նստում հանքագործության ոլորտում գործող մի շարք առանձնահատկությունների հետ, այլապես այս կամ այն հարկման գործիքի սահմանումը՝ առանց հաշվի առնելու տվյալ առանձնահատկությունները, հանգեցնում է ոլորտում էական խեղաթյուրումների և երկարաժամկետում ընդերքի օգտագործումից սպասվող երկրի օգուտների իրական կորուստների: Օրինակ, կառավարության կողմից չափից շատ եկամուտների հավաքելիության վրա շեշտադրումը կարող է բերել բյուջեի կարճաժամկետ

եկամուտների աճի, սակայն երկարաժամկետում էապես նվազեցնել ամբողջական հավաքագրվող պոտենցիալ եկամուտների զուտ ներկա արժեքը, քանի որ ընկերությունները հակված չեն լինի նոր նախագծերի ձեռնարկմանը, իսկ գործողներն էլ շուկայի ցիկլային տատանումներին չդիմանալով կամ նախկինում վերցրած վարկային պարտավորությունները անկարող լինելով սպասարկել՝ հարկումից հետո իրենց տնօրինման տակ մնացող կանխիկի կրճատման պատճառով, կընկնեն սննանկության թակարդի մեջ:

Ավելին՝ հանքի կյանքի տևողությունը կախված է լինում թե որքան է տվյալ հանքատեղանքում **տնտեսապես արդյունահանելի² ռեսուրսների (պաշարների)** քանակությունը³: Օրինակ պաշարների քանակությունը հանքի (ընկերության) տեսանկյունից կարող է նվազել (այսինքն այն դառնա տնտեսապես ոչ արդյունահանելի) երբ մետաղի գները նվազեն կամ հարկերն աճեն և հակառակը: Ուստի վերը նշված թեզը, որ հանքի շահագործման կեսից ծանրացնող հարկային ռեժիմի փոփոխությունը կարող է հանգեցնել ոլորտում էական խեղաթյուրումների և երկարաժամկետում ընդերքի օգտագործումից սպասվող երկրի օգուտների իրական կորուստների (զուտ հարստության նվազման), միջազգային գրականությունում փաստարկվում է նաև նրանով, որ այլ հավասար պայմաններում հանքերի պաշարների մի մասը կդառնան **տնտեսապես ոչ արդյունահանելի** ուստի և կկրճատվեն՝ հանգեցնելով հանքի արժեքի նվազման և երկրի համար գեներացվող տնտեսական օգուտների փոքրացման (Մանրամասն տես՝ Հավելված 1):

Ամփոփելով նշենք, որ այս կամ այն հարկատեսակի գծով խաղի կանոնների փոփոխությունները կառավարությունների կողմից պետք է լինեն խիստ զգուշավոր և հաշվի առնի հանքագործության ոլորտում առկա առանձնահատկությունները, սահմանափակումներն ու ռիսկերը:

Փաստաթղթի հետագա բաժինները շարադրված են հետևյալ կարգով. II բաժնում քննարկվում է հարկման համակարգերի տեսանկյունից ուշարժան հանքագործության ոլորտի առանձնահատկությունները, III բաժնում ներկայացվում է հանքագործության հարկման ռեժիմների միջազգային փորձը զուգահեռներ անցակցնելով նաև Հայաստանում ներկայումս գործող հարկման և ռոյալթիի նոր առաջարկվող համակարգերի միջև, IV բաժնում ներկայացվում է Բեյզ Մեթլզ ընկերության օրինակով հարկման տարբեր՝ գործող և առաջարկվող համակարգերի ազդեցությունը, V բաժնում որպես ամփոփում ներկայացված են եզրահանգումները, IV բաժնում հավելվածի տեսքով ներկայացվում է հանքերի արժեքի գնահատման CIMVAL-ի ստանդարտները:

² Տնտեսապես արդյունահանելիությունը գնահատվում է հանքը շահագործողի տեսանկյունից՝ հանքի արժեքի գնահատման մոդելներ կիրառելով: Ուստի և ցածր գները կամ բարձր հարկերը նշանակում է ավելի քիչ կանխիկ հոսքեր հանքը շահագործող ընկերության տնօրինման տակ հետևապես և ավելի քիչ տնտեսական խթան ընդերքը շահագործելու (ներդրողի տեսանկյունից):

³ Հանքարդյունաբերության մեջ օգտագործվող **հանքային ռեսուրս** և **պաշար** հասկացությունների սահմանումները, բացատրություններն ու տարբերությունները ներկայացված են Հավելված 1-ում: Այստեղ միայն նշենք, որ հանքի արժեքի գնահատման համար վերցվում է հանքային պաշարները կամ որ նույն է *հանքային ռեսուրսի տնտեսապես արդյունահանելի մասը*:

II. ՀԱՆՔԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հանքագործության ոլորտում հարկման ռեժիմների սահմանումից առաջ, միջազգային գրականությունը և երկրների փորձը խորհուրդ են տալիս կառավարություններին հաշվի նստել ոլորտի առանձնահատկությունների հետ: Այն երկրները, որոնք կարողացել են հարկման ռեժիմները սահմանելիս խելամիտ մոտեցում ցուցաբերել, հաշվի առնելով այդ առանձնահատկությունները, ունեցել են և՛ կարճաժամկետ, և՛ երկարաժամկետ շահումներ: Ոլորտի առանձնահատկությունները կարելի է խմբավորել 4 հիմնական խմբերի:

1. Հանքի շահագործման կյանքի սահմանափակվածություն: Հանքային ռեսուրսների կարևոր առանձնահատկությունն այն է, որ դրանք սահմանափակ են և սպառվող: Այսինքն, այս ոլորտն այլ ոլորտում իրականացվող գործունեությունից էապես տարբերվում է նրանով, որ ներդրողի մոտ իր կանխիկ հոսքերը հաշվարկելի են որոշակի սահմանափակ ժամանակահատվածի համար: Այդ ժամանակահատվածը այլ հավասար պայմաններում սովորաբար տատանվում է 20-25 տարվա կտրվածքով, այսինքն, հանքի շահագործման կյանքի միջին տևողությունը ներդրողների համար վերջանալի մեծություն է, ուստի և դրանից ածանցված կանխիկ հոսքերը ևս, եթե նոր հետախուզական աշխատանքներ և ներդրումներ, նոր պաշարների հայտնագործման մասով չեն իրականացվում⁴: 20-25 տարվա հորիզոնի նախընտրությունը ներդրողների կողմից գլոբալ առումով պայմանավորվում է երկու հանգամանքով՝

ա. Արտադրական հզորությունների մաշվածությամբ, այսինքն այս ընթացքում գրեթե ամբողջովին փոխարինման ենթակա են լինում արտադրական հզորությունները, և
բ. Մետաղի համաշխարհային շուկայի առնվազն 2-3 ցիկլի համընկնում, որի պարագայում ներդրողը կարողանում է գոնե մետաղի համաշխարհային գների երկու անկման պարբերաշրջան փոխհատուցել մեկ կամ երկու պիկային պարբերաշրջանով⁵:

Այդ իսկ պատճառով արդյունահանումն ունի իր գինը. ռեսուրսների արդյունահանումը նշանակում է, որ դրանք ապագայում այլևս չեն լինի, իսկ ներդրողը պետք է ճիշտ հաշվարկի եղած հարկման համակարգերի պայմաններում պրոյեկտի արժեքը՝ հաշվի առնելով նաև ոլորտի բարձր ռիսկայնությունը:

Ուստի հարկման ռեժիմի ցանկացած բացասական փոփոխություն (դրույքների վերանայում բարձրացման ուղղությամբ) հանքի շահագործման կես ճանապարհին կարող է հանգեցնել արդյունահանման ծրագրի վնասաբերության (ծրագրի դեֆոլտի)՝ հետևաբար և երկարաժամկետում բյուջեի եկամուտների կորստի:

⁴ Որպես կանոն, ներդրողները պետության հետ համատեղ՝ կախված առկա պաշարների չափից, իրենք են որոշում, թե ինչ արտադրողականությամբ արդյունահանեն, որպեսզի նվազագույնի հասցնեն պրոյեկտի հետ կապված ռիսկերը (ներդրողի և պետության տեսանկյունից) և մեկ պրոյեկտի կյանքի տևողությունը լինի ցանկալի ժամանակային տիրույթում՝ 20-25 տարի:

⁵ Միջազգային գրականությունը փաստում է, որ հումքային՝ այդ թվում մետաղների գների պարբերաշրջանների տևողությունը շուրջ 7-8 տարի է, որի ընթացքում գների անկման ֆոնը փոխարինվում է գների վերելքով կամ հակառակը:

2. Պահանջվող ներդրումների աննախադեպ մակարդակ եվ զգալի վարկային ռեսուրսների ներգրավում:

Ի տարբերություն այլ ոլորտների գործունեության, հանքագործությունը սովորաբար համարվում է զգալի ներդրումներ և “սուզված ծախսեր” (Sunk Costs) պահանջող ոլորտ: Որպես կանոն հանքագործությունը բաժանվում է 3 հիմնական փուլերի. 1. Երկրաբանահետախուզական աշխատանքների կատարում՝ պաշարների հայտնաբերման համար, 2. Ենթակառուցվածքների և մշակող ֆաբրիկայի կառուցում, 3. Բուն արդյունահանման կազմակերպում և հանքաքարի մշակում: Իրականում ներդրողը եկամուտ կարողանում է ապահովել միայն 3-րդ փուլում, իսկ առաջին երկու փուլերում ստիպված է լինում ահռելի ներդրումներ կատարել, որոնք հասնում են հարյուրավոր միլիոն ԱՄՆ դոլարների⁶: Այդպիսի ներդրումների աղբյուր սովորաբար հանդիսանում են ներդրումային բանկերի կողմից տրամադրվող վարկային միջոցները⁷:

Այլ կերպ ասած, հանքագործության ոլորտի ծրագրերին խիստ ներհատուկ է վարկային ռեսուրսներով ծանրաբեռնվածության բարձր մակարդակը, ուստի և հանքի շահագործման ընթացքում հարկման համակարգերի չհաշվարկված բացասական փոփոխությունները (հարկային դրույքների բարձրացումները) կարող է կոնկրետ ծրագիրը փանել դեֆոլտի, քանի որ հարաբերականորեն ավելի քիչ ազար կանխիկ միջոց կթողնվի փոփոխվարողին սպասարկելու իր նախկինում սպանձնած վարկային պարտավորությունները:

3. Յուրաքանչյուր հանքի տարբեր աշխարհագրություններ, երկրաբանություններ, պարունակություններ և արդյունահանման ծախսեր:

Հանքագործության երրորդ յուրահատկությունը կայանում է նրանում, որ հանքերը միմյանցից էապես տարբերվում են հանքում մետաղ(ներ)ի պարունակության աստիճանով, հանքի արդյունահանման և տեղանքի աշխարհագրական բարդություններով, երկրաբանությամբ, արտահանման շուկաներից հանքի հեռու գտնվելով և այլ գործոններով, որոնք ի վերջո հանգեցնում են միավոր տոննա մետաղի արդյունահանման տարբեր ծախսերի, հետևապես և արդյունահանման ծրագրերի տարբեր շահութաբերության մակարդակի: Այսպես օրինակ, Թեղուտի հանքավայրի մակբացման գործակիցը 1.1-ի շրջանակներում է, ինչը նշանակում է, որ 1 տոննա հանքաքար արդյունահանելու համար ընկերությունը պետք է 1.1 տոննա մակբացման ծախս կատարի, Կաշենի և Ագարակի համար նույն ցուցանիշը 2.5-3-ի շրջանակներում է, իսկ օրինակ Քաջարանինը՝ մինչև 1-ի շրջանակներում է: Համանման կարգով՝ Քաջարանի պաշարներում պղնձի պարունակությունը գտնվում է 0.25%-ի շրջանակներում մեկ տոննա հանքաքարի հաշվով, Կաշենում՝ 0.44%-ի, իսկ օրինակ Թեղուտում՝ 0.27%-ի: Ինչ վերաբերում է հանքաքարից մետաղների կորզման ցուցանիշներին, ապա հանքաքարերի երկրաբանական կառուցվածքը Թեղուտում և Քաջարանում թույլ է տալիս կորզման ցուցանիշ ունենալ 0,85-0,88%-ի շրջանակներում,

⁶ Օրինակ Թեղուտի հանքավայրի առաջին երկու փուլերի ծախսերը կազմել է շուրջ 350 մլն ԱՄՆ դոլար, Ամուլսարինը՝ շուրջ 426 մլն ԱՄՆ դոլար, Կաշենի հանքավայրինը շուրջ 150 մլն ԱՄՆ դոլար և այլն:

⁷ Պետք է նաև նշել, որ տարբեր գործոններով պայմանավորված (քաղաքական, հասարակական, մշակույթային և այլն) հանքագործությունը մի ոլորտ է, որին ներհատուկ է նաև «կամավոր-պարտադիր» սկզբունքով էական սոցիալական ծրագրերի ֆինանսավորումը, որը շատ դեպքերում անտեսվում է, սակայն իրականում ազդում է հանքը շահագործողի կանխիկ հոսքերի վրա:

իսկ Կաշենում՝ 0.77-0.8%-ի: Ակնհայտ է, որ այս ցուցանիշների տարբերությունները հանգեցնելու են հանքերի տարբեր շահութաբերության:


Սա նշանակում է, որ հարկման միջին բեռը (կամ էֆֆեկտիվ հարկային դրույքը բոլոր հարկատեսակների և պետական գանձումների մասով) տարբեր կլինի տարբեր հանքերի համար: **Ուստի հարկման համակարգի որևէ բացասական փոփոխություն (հարկման դրույքների բարձրացման առումով) մետաղի նույն գների պարագայում կարող է «տանելի» լինել մի հանքի համար, սակայն աղետալի երկրորդի համար: Իրավիճակն էլ ավելի կարվի, երբ առաջարկվող հարկային նոր փոփոխությունը կառավարությունը կատարի ընկերության ընդհանուր շրջանառության (եկամտի) և ոչ թե շահութաբերության նկատմամբ որևէ հարկատեսակի գծով տոկոսների բարձրացմամբ:**

4. Հանքագործության ոլորտի տատանողականության և անորոշությունների բարձր մակարդակ: Ի տարբերություն այլ ոլորտների, հանքագործությունը սովորաբար համարվում է խիստ տատանողական և ռիսկային ոլորտ: Ռիսկերի առաջին խումբը ասոցացվում են հանքի շահագործման փաստացի պայմանների հետ: Օրինակ, հետախուզության փուլում հանքի պաշարների և հանքի մետաղական պարունակության գնահատականները կարող են չհամընկնել հանքի շահագործման ընթացքում ի հայտ եկած փաստացի տվյալների հետ՝ հանգեցնելով նաև հանքի արժեքի նախնական գնահատականի և փաստացի ֆինանսական հոսքերի էական տարբերություններին:

Ռիսկերի երկրորդ խումբը, որը շատ ավելի կարևոր է հարկման մեխանիզմների սահմանման տեսանկյունից, սովորաբար կապվում է համաշխարհային շուկաներում մետաղների գների խիստ տատանողական բնույթի հետ, որի պատճառները բազմազործոն են և արտացոլում են գլոբալ տնտեսական զարգացումները, ներդրողների տրամադրությունները, խոշոր երկրների դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների ազդեցությունները և այլն: Ընդ որում, բարձր գնային տատանողականությունը դիտվում է ինչպես տարվա կտրվածքով, այնպես էլ պարբերաշրջանների ապլիտուդի առումով⁸: Ինչ վերաբերում է մետաղի գների պարբերաշրջանների տևողություններին (գնային վերելքների և նվազումների երկարությանը), ապա վերջիններս գնահատվում են 7-8 տարի:


⁸ Այսպես օրինակ, 2008թ-ի ապրիլից 2009թ-ի ապրիլն ընկած ժամանակահատվածում համաշխարհային շուկաներում պղնձի միջին ամսական առավելագույն գինը 1 տոննայի դիմաց եղել է \$8,685, իսկ նվազագույն գինը \$3,072, այսինքն մեկ տարվա կտրվածքով տատանողականությունն ավելի քան երկու անգամ: Համանման կարգով 2011 թվականից դիտված գների անկման պարբերաշրջանում պղնձի գների առավելագույն մակարդակը եղել է \$9,556 իսկ նվազագույն մակարդակը՝ \$4,463:

ԳՐԱՖԻԿ 1:



Ուստի, եթե արդյունահանման ծրագիրը մեկնարկում է գնային անկման պարբերաշրջանի սկզբին, ապա հարկման համակարգերը չպետք է «խանգարեն», որպեսզի վերելքի փուլին արդյունահանման ծրագիրը փոխհատուցի ցածր գնային միջավայրի պայմաններում իր «կրած վնասները»: Ասվածը պատկերավոր ներկայացված է Գրաֆիկ 2-ում:

ԳՐԱՖԻԿ 2:



*Հանքի շահագործման ծրագրի համար հաշվարկված միջին գին, որից ցածրի դեպքում ծրագիրը դառնում է վնասաբեր:

Գրաֆիկից պարզորոշ երևում է, որ, եթե հանքի շահագործման ծրագիրը մեկնարկի A կետից, ապա մի որոշ ժամանակահատվածում այն ստիպված է գործել ցածր գնային միջավայրի վնասաբերության տիրույթում՝ սպասումով, որ բարձր գնային տիրույթում ի վիճակի կլինի փոխհատուցելու նախկին ժամանակահատվածում կրած վնասները: Եթե

В-կետում գտնվելու ժամանակ կառավարությունը՝ գայթակղվելով բարձր գնային միջավայրից, որոշի փոփոխել հարկման ռեժիմը՝ բաժրացնելով հարկերը, ընդ որում դա կատարի չմտածված, ապա մեծ է հավանականությունը որ հանքի շահագործման ծրագիրն ամբողջությամբ դառնա ոչ շահութաբեր, իսկ ծրագիրը գնա դեֆոլտի: **Հետևապես հարկման համակարգը պետք է նախագծվի և սահմանվի այնպես, որ պետությունը կարողանա գնային տարանջատման ժամանակ համաչափ մոտեցում ցուցադրի հանքարդյունահանողներին. Ցածր գնային միջավայրի դեպքում հարաբերականորեն քիչ հարկի ոլորտը՝ օգնելով ոլորտին դիմանալ ցածր գնային միջավայրում, իսկ բարձր գների պայմաններում վերցնի իր արդարացի մասնաբաժինը:**

ԱՄՓՈՓՈՒՄ: Հանքարդյունաբերության ոլորտում արդարացի հարկման ռեժիմների սահմանումը պահանջում է կառավարություններից հաշվի նստել ոլորտի գործունեության առանձնահատկությունների հետ, որոնց անտեսումը կամ մասնակի հաշվի առնումը կարող է հանգեցնել խեղումների: Այդպիսի առանձնահատկությունները խոշոր հաշվով կարելի է բաժանել 4 խմբի.

- Հանքերի կյանքի տևողության՝ հետևապես և ներդրողի ապագա կանխիկ հոսքերի սահմանափակվածություն և ռեսուրսների վերջանալիություն
- Պահանջվող սկզբնական ներդրումների (ծախսերի) բարձր մակարդակ և վարկային ռեսուրսներով արդյունահանման ծրագրերի էական ծանրաբեռնվածություն
- Հանքերի շահագործման տարբեր ծախսային կառուցվածքներ՝ կապված աշխարհագրական, որակական և այլն գործոններով
- Ոլորտի բարձր ռիսկայնություն և իրացման շուկաների բարձր գնային տատանողականություն:

Այս առանձնահատկություններով պայմանավորված՝ ներդրողների համար հանքային ոլորտի հարկման ռեժիմների մասով հիմնական մտահոգությունը կապվում է ժամանակի համապատասխանելիության խնդրի հետ (time consistency problem)⁹: Ինչ վերաբերում է կառավարություններին, ապա վերջիններս ընկալում են, որ Հանքարդյունաբերական նախագծերը տեղանքային են (յուրաքանչյուրը յուրահատուկ է), ենթադրում են բարձր սուզված ծախսեր (Sunk Costs) և կարող են շատ երկարատև լինել: Այդ իսկ պատճառով, առանձին կառավարություններ հաճախ որոշում են կայացնում սկզբնական փուլում նշանակալի հարկային արտոնություններ առաջարկել ոլորտում ներդրումներ գրավելու նպատակով: Բայց ներդրումները կատարելուց անմիջապես հետո կառավարությունների մոտ մեծանում է գայթակղությունը առկա պայմանները վերանայելու՝ դրանք պետության

⁹«Ժամանակային համապատասխանելիություն» տերմինն իր մեջ մարմնավորում է հանքի շահագործման ողջ ժամանակահատվածում հարկման և պետության հետ առնչվող այլ խաղի կանոնների հստակություն և կայունություն:

համար թվացյալ ավելի “նպաստավոր” դարձնելու նպատակով, թեև հանքերի շահագործման ժամանակահատվածի կեսից խաղի կանոնների փոխելը, ինչպես վերը նշվեց, մշտապես հղի է ոլորտում խեղումներ մտցնելու, ծրագրերը դեպի վնասաբերություն ուղղորդելու և նոր ներդրումներ ներգրավվելու խթանները մաշացնելու ռիսկերով:

Միջազգային պրակտիկայում Ներդրողները գիտակցում են այս փոփոխական խթանների ազդեցությունը և փորձում են դրանցից պաշտպանվել տարբեր եղանակներով, օրինակ կառավարությունների հետ համաձայնության են գալիս լիցենզիայի պայմանագրում ամրագրել հանքի շահագործման ժամանակահատվածում **կայուն հարկման ռեժիմի** (fiscal stability clause) պահպանման նախապայմանը կամ պահանջում են կայունության նախապայմանի օրենսդրական կարգավորում, օրինակ ներդրումների պաշտպանության օրենքներում (grandfather clause): Եթե կառավարությունները ընդառաջ չեն գնում այս պահանջներին, Ներդրողների մոտ դժկամություն է առաջանում աշխատել փոփոխական ռեժիմներով տնտեսություններում կամ նախընտրում են աշխատել այնպիսի հարկային ռեժիմներում, որոնք թույլ են տալիս կարճացնել ներդրումների փոխհատուցման ժամանակահատվածը:

Վերը նշվածը հաշվի առնելով՝ խելամիտ կարգավորումը կառավարություններից պահանջում է հանրագործության ոլորտում հարկման ռեժիմները կառուցել այնպես, որ նվազագույնի հասցվի որևէ կողմի՝ վերաբանակցելու շահագրգռվածությունը: Հարկման կայունության նախապայմանը և հարկման համակարգերի ճիշտ նախագծումը փոփոխվող իրավիճակներին ինքնաշխատ արձագանքելու համար հատկապես կարևոր է հանրաբարյունաբերության մեջ, որովհետև սա մի ոլորտ է, որին ներհատուկ է բարձր աստիճանի անորոշությունը, այդ թվում, օգտակար հանածոների գների, հանքային պաշարների և երկրաբանության, արտադրական ծախսերի հետ կապված անորոշությունները, ինչպես նաև քաղաքական ռիսկերը:

III. ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Այս բաժնում կներկայացվի ընտրված 15 երկրների հարկման համակարգերի համեմատականը, որոնք միասին վերծված պղնձի, կոբալտի և նիկելի համաշխարհային արտադրության հիմնական մասը ծածկում են: Պետք է նաև նշել, որ սույն նյութում կսահմանափակվենք միայն օրեսդրական կարգավորումների համեմատականը ներկայացնելով, քանի որ ըստ երկրների **արդյունավետ հարկային բեռը** ներկայացնելու համար անհրաժեշտ է կառուցել օրինակելի միջին հանքի մոդել և երկրների հարկման համակարգերը տարածել օրինակելի հանքի մոդելի վրա¹⁰:

Աղյուսակ 1-ում բերված է ընտրված 15 երկրների արտադրության ծավալները և դրանց կշիռները համաշխարհային արտադրության ծավալների մեջ:

Աղյուսակ 1. Ըստ երկրների և մետաղների արտադրության ծավալները և կշիռը համաշխարհային արտադրությունում (Co, Cu & Ni) 2018 (000 տ. և %).

Երկիր	Կոբալտ (հազ.տ)	Co %	Պղինձ (հազ.տ)	Cu %	Նիկել (հազ.տ)	Ni %
Ավստրալիա	6	3 %	913	6 %	148	7 %
Բրազիլիա	0	0 %	381	2 %	74	3 %
Կանադա	5	3 %	539	3 %	180	8 %
Չիլի	-	0 %	5 832	35 %	-	0 %
Չինաստան	9	5 %	1 591	10 %	99	4 %
Կոնգո	109	65 %	1 225	7 %	-	0 %
Ինդոնեզիա	0	0 %	651	4 %	509	23 %
Ճամայկա	1	0.5%	1.2	1%	-	0%
Ճապոնիա	1	0.5%	-	0%	0.6	0%
Պապուա Նոր Գվինեա	3	2 %	96	1 %	35	2 %
Պերու	-	0 %	2 437	15 %	-	0 %
Ֆիլիպիններ	5	3 %	70	0 %	345	15 %
Լեհաստան	-	0 %	401	2 %	-	0 %
Ռուսաստանի Դաշնություն	5	3 %	785	5 %	218	10 %
ՀՎ. Աֆրիկա	1	1 %	47	0 %	43	2 %
Ընդամենը 15 երկիր	145	86 %	14 969	91 %	1 652	74 %
Ընդամենը Աշխարհ	168	100%	16 500	100 %	2 233	100 %

Աղբյուրը: RMG Consulting 2020.

¹⁰ Եթե կառավարությունը անհրաժեշտություն կունենա նմանատիպ մոդել կառուցելու, ապա դա ևս կներկայացվի պահանջի դեպքում:

Հանրադրյունաբերության ոլորտում հարկման ռեժիմները սահմանման ընդհանուր սկզբունքը կայանում է նրանում, որ վերջինս կարողանա ճիշտ հաշվեկշռել հասարակության (Պետության) բնական պաշարների նկատմամբ ունեցած սեփականության իրավունքի դիմաց հավաքագրվող վարձավճարները (հարկեր, փուրքեր պետական գանձումներ և այլն) ներդրողների շահույթի, կայունության և կանխարեսելիության պահանջների դիմաց:

Հանքագործության ոլորտում հարկման համակարգերը մշակելիս կառավարությունները, կորպորատիվ համընդհանուր հարկման նպատակներից բացի, ունենում են նաև մի քանի այլ նպատակ: Mullins & Burns (2016) տալիս են այդ նպատակների հետևյալ ձևակերպումները.

1. Ապահովել պետության եկամուտների համաչափ մակարդակ հանքի շահագործման կյանքի ընթացքում:
2. Երաշխավորել բոլոր ժամանակներում կառավարության “կախյալ” եկամուտների հավաքելություն՝ հանքի շահագործման կյանքի ընթացքում:
3. Ունակ լինել հարմարվել տատանողականություններին՝ հաշվի առնելով ոլորտում առկա բարձր անորոշությունները՝ մասնավորապես գների, ծախսերի և երկրաբանության առումով:
4. Սահմանափակել Հարկային համակարգի կողմից մասնավորի առևտրային որոշումների նկատմամբ հնարավոր խեղաթյուրումները:
5. Նվազագույնի հասցնել հարկային մարմիններին և ընկերությունների ծախսերը կապված վարչարարության և վերահսկողության հետ:
6. Ապահովել մաքսիմալ թափանցիկություն արդյունահանող ընկերությունների հարկման պայմանների և վճարվող գումարների նկատմամբ:

Վերոնկարագրյալ նպատակները փոխկապակցված և փոխլրացնող են, հաշվի են առնում նաև հանքագործության ոլորտի առանձնահատկությունները: Գործիքակազմը, որով կառավարությունները հնարավորություն ունեն թիրախավորելու այդ նպատակները հետևյալն են.

- **Ռոյալթիներ (Mining Royalties)** – գանձվում են որպես արտադրության ֆիզիկական ծավալից կամ համախառն եկամտից տոկոս;
- **Եկամուտների կամ շահույթի վրա հիմնված հարկեր (Income or profit based tax)** - հիմնականում շահութահարկ (CIT); եւ
- **Հանքանյութի վարձակալության հարկ (Mineral rent tax)** - հարկեր, որոնք ուղղված են ներդրողների շահույթների գերազանցման դեպքում պետությանը լրացուցիչ մասհանումներ կատարելուն:

Հաշվեկշռվածությունն ըստ առանձին նպատակների ու ընտրված հարկման գործիքների¹¹, հետևաբար և հարկային համակարգերի միջև, բնականաբար

¹¹ Ի նկատի է առնվում թե կառավարությունները եկամուտների ապահովման համար որ գործիքին ինչ շեշտադրում են անում:

տարբերվում է երկրից երկիր մի շարք պատճառներով. Պատմական, տնտեսական, երկրաբանական, քաղաքական և այլն:

1. ՌՈՅԱԼԹԻՆԵՐ

Ըստ միջազգայնորեն ընդունված սահմանման ռոյալթին այն գումարն է, որը վճարվում է կառավարությանը՝ պետությանը պատկանող ընդերքի պաշարները վերցնելու (օգտագործելու և վաճառելու) իրավունքի դիմաց (Mullins & Burns 2016): Արժույթի միջազգային հիմնադրամը (2016) նշում է, որ Ռոյալթիները հանքարդյունահանման արտադրությունից գանձվող վճարներ են, որոնք կիրառվում են կամ որպես արտադրական ծավալի դիմաց ֆիքսված վճար («հատուկ» ռոյալթիներ), կամ որպես արտադրության արժեքից տոկոս («ad-valorem»՝ արժեքային ռոյալթիներ): Հանքագործության և Մետաղների Միջազգային Խորհուրդը՝ ICMC-ն (International Council on Mining and Metals) տալիս է ռոյալթիների մեկ այլ սահմանում, որը եկամտից և/կամ շահույթի մեծությունից կախված ընդերքօգտագործողից գանձվող մեծություն է:

Ջեյմս Օտտոն (2006թ) օգտագործում է լայն սահմանում և նշում, որ ռոյալթին ցանկացած հարկ է, որը ցուցադրում է հետևյալ հատկանիշներից մեկը կամ մի քանիսը.

- Հարկի նպատակն է վճարում կատարել բնական պաշարի սեփականատիրոջը՝ որպես փոխհատուցում, այդ պաշարի սեփականությունը կամ այդ պաշարի վաճառքի իրավունքը ներդրողին փոխանցելու համար.

- Հարկի նպատակն է բնական պաշարի արտադրողից գանձել արտադրված օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի համար

- Հարկը հատուկ է հանքերի համար և չի կիրառվում այլ արդյունաբերությունների համար:

Ստորև ներկայացված է երկրների կողմից կիրառվող Ռոյալթիի երեք տեսակները.

Եկամուտի (շահույթի) վրա հիմնված ռոյալթիներ (Income (profit) -based royalties):

Հաշվարկվում են հանքարդյունաբերական ընկերության շահույթի կամ զուտ դրամական հոսքերի նկատմամբ, այսինքն հիմնված են զուտ եկամուտների վրա և չեն ներառում ընկերության ծախսերը հարկման բազայում:

Զուտ եկամուտների/շահույթի վրա հիմնված ռոյալթիները թույլ են տալիս պետությանը թիրախավորելու օգտակար հանածոյի գնային տատանումները:

Արժեքի վրա հիմնված ռոյալթիներ (Value-based royalties (Ad Valorem)):

Արժեքի վրա հիմնված ռոյալթիները հաշվարկվում են հանքանյութի արժեքը (իրացման շրջանառությունը) բազմապատկելով ռոյալթիի տոկոսադրույքով: Հանքանյութի արժեքը սովորաբար սահմանվում է տոննա/մետաղի պարունակությունը բազմապատկելով տվյալ մետաղի հենանիշային գնով: Թեև արժեքի վրա հիմնված ռոյալթիները ևս արձագանքում են մետաղի գների փոփոխություններին, սակայն որոշ դեպքերում երկրները նախընտրում են ունենալ նաև շահույթի վրա հիմնված ռոյալթիի կոմպոնենտ՝ ուժեղացնելու գնային տատանումների նկատմամբ ռոյալթիի պրոգրեսիվությունը:

Ծավալի վրա հիմնված ռոյալթիներ (Volume-based royalties): Այս տիպի ռոյալթիները կախված են լինում արտադրության ծավալներից, հաշվարկվում են որպես միավոր տոննայից ֆիքսված գումար: Այն համեմատաբար քիչ կիրառելի է կառավարությունների կողմից, քանի որ անտեսում է շուկայում գնային տատանումների գործոնը:

Ըստ երկրների, ռոյալթիները տարբերվում են իրենց չափի և հարկվող բազայի առումով: Այն կարող է նաև տարբերվել միևնույն երկրի ներսում գտնվող հանքերի/ընկերությունների միջև՝ կախված արտադրված հանքաքարի կամ ստեղծած արժեքից, ինչպես նաև անհատական հարկային համաձայնագրերից: Օրինակ, Կանադայում Օնտարիո նահանգի հյուսիսային մասերում գտնվող հեռավոր հանքերի համար ռոյալթին սահմանված է 5 % շրջանառությունից, իսկ հարավային մասերում գտնվող հանքերի համար՝ 10 %: Օնտարիոն նաև օգտագործում է հարկերի ազատում նոր հանքերի շահագործման ծրագրերի համար՝ 3 կամ 10 տարի տևողությամբ (կախված հանքի գտնվելու վայրից): Դրանով իսկ Կանադան վարում է քաղաքականություն հեռավոր շրջաններում արդյունաբերության և ներդրումների խթանման, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծման համար:

Ըստ կիրառվող Ռոյալթիների տեսակի (հատուկ կամ արժեքային) ուսումնասիրվող երկրների թվում շատերն օգտագործում են արժեքի վրա հիմնված ռոյալթիների համակարգ (շրջանառությունից կամ եկամտից տոկոս): Այդ երկրներն են Ավստրալիան (Քուինսլենդ), Բրազիլիան (Մինաս Զերայիս տարածաշրջան), Չինաստանը, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը, Ինդոնեզիան, Ճամայկան, Ճապոնիան, Պապուա Նոր Գվինեան, Ֆիլիպինները, Ռուսաստանի Դաշնությունը և Հարավային Աֆրիկան: Այս երկրների միջև Ռոյալթիների դրույքաչափերը տատանվում են 1-20%-ի միջև, տե՛ս ստորև բերված աղյուսակ 2-ը: Քաջի կամ ծավալի նկատմամբ գանձվող ռոյալթիի համակարգը քիչ տարածված է և ուսումնասիրված երկրների թվում գրեթե ոչ ոք չի օգտագործում այս մոտեցումը: Դիտարկվող երկրներից միայն Լեհաստանում է հանդիպում ֆիքսված (հաստատագրված վճարներ) վճարների կիրառումը՝ արտադրված որոշ հանքանյութերի մեկ տոննայի դիմաց¹²:

Շահույթի վրա հիմնված Ռոյալթիները ևս բավականին տարածված են: Նման համակարգի ընտրության պատճառներից մեկն այն է, որ երկրները փորձում են ինքնաշխատ հարկման մեխանիզմ սահմանել թիրախավորելու մետաղների շուկայի գնային տատանումները: Այդպիսի համակարգ օգտագործում է օրինակ Չիլին: Շահույթի

¹² Լեհաստանում գործում են երկմակարդականի հարկ՝ հանքարդյունահանման կոնցեսիոն վճար, որն ունի հաստատուն և փոփոխուն կոմպոնենտ (հաստատուն կոմպոնենտը հաշվարկվում է ռեսուրսների հետախուզական փուլում՝ հայտնաբերված ռեսուրսների հաշվարկված արժեքից չնչին տոկոս, իսկ փոփոխուն մասը հաշվարկվում է միայն արդյունահանման փուլում 5-50% (մետաղների դեպքում 30%) նախորդ տարում վճարած ռոյալթիի արժեքից) և Հանքի շահագործման վճար, որը գանձվում է արդյունահանման ծավալից վճար (ռոյալթի): Պղնձի և արծաթի համար գոյություն ունի նաև հատուկ հարկ, որը կարելի է համարել ռոյալթիի երրորդ կոմպոնենտը և **կիրավորվում է միայն 1 ընկերության նկատմամբ՝ copper & silver combine KGHM Polska Miedz**: Այն հաշվարկվում է արտադրված ծավալի նկատմամբ բանաձևով՝ հիմք ընդունելով պղնձի և արծաթի գները: Պղնձի համար այն հաշվարկվում է ծավալի նկատմամբ հետևյալ կերպ՝ եթե պղնձի միջին ամսեկան գինը բարձր է 15,000 զլտոիից (≈ \$3,700 /տ), ապա հարկային դրույքը (Tax Rate) = [0.033 × Cu գին + (0.001 × Cu գին)^{2.5}] × 0.85 բայց ոչ ավել՝ 16,000 լեհական զլտոի (PLN) / 1 տոննայի դիմաց: Եթե գինը ցածր է նշված շեմից, ապա Tax Rate = (Cu գին – PLN 12,000) × 0,374:

վրա հիմնված ռոյալթի դրույքաչափերը Չիլիում տատանվում են 0.5-14 % -ի սահմաններում՝ կախված արտադրված ռաֆինացված պղնձի քաշից: Պերույն ևս մեկ երկիր է, որն աշխատում է շահույթի վրա հիմնված ռոյալթի համակարգով: Ընդ որում Պերուում գործում է համակցված ռոյալթի համակարգը, որը նման է ներկայիս ՀՀ-ում գործող ռոյալթի համակարգին և տատանվում է 3-19,9 %-ի սահմաններում՝ հաշվարկված գործառնական եկամտի բազայի նկատմամբ¹³:

Ռոյալթիների չհարկվող շեմ (որոնցից ռոյալթիներն ազատված են) դիտարկվող երկրներից հանդիպում է Չիլիում և Ավստրալիայում (Քվինսլենդ): Ավստրալիայում (Քվինսլենդ), օրինակ, համապատասխան հանքանյութի ընդհանուր արժեքի առաջին 100,000 ավստրալիական դոլարի համար (մոտ \$73,000) ռոյալթի չի վճարվում: Չիլիում հարկատուներն ազատվում են ռոյալթի վճարելուց, եթե տարեկան վաճառքները ցածր են 12,000 տոննա գտված պղնձի համար հաշվարկված համարժեք գումարից:

Որոշ երկրներ ունեն միադրույք ռոյալթի համակարգ, սակայն դիտարկված երկրների մեծամասնությունը օգտագործում են ռոյալթի դրույքների սանդղակային համակարգ կախված այս կամ այն մեծությունից: Օրինակ, Հարավային Աֆրիկայում գործում է Ռոյալթի սանդղակային համակարգը՝ 0.5-7%-ի սահմաններում հաշվարկված վաճառվող հանքանյութի արժեքից: Հարավային Աֆրիկայում ռոյալթի տոկոսադրույքը կախված է այն բանից թե հանքանյութը գտված է, թե ոչ (նույն օրենքով տրված են նաև գտված հանքանյութի/մետաղի սահմանումները): Նվազագույն ռոյալթի տոկոսը գտված օգտակար հանածոների դեպքում կազմում է 0.5 %, իսկ առավելագույն տոկոսը՝ 5 %: Չգտված օգտակար հանածոների դեպքում ռոյալթի սանդղակն ավելի բարձր է՝ նվազագույն տոկոսը կազմում է 0.5 %, իսկ առավելագույն տոկոսը՝ 7 %: Ըստ էության այս կերպ Հարավային Աֆրիկայի կառավարությունը փորձում է խթանել ավելի բարձր արժեք ստեղծող վերամշակման օղակների գործունեությունը, որպես հանքարդյունաբերությունից կախվածությունը նվազեցնելու և տնտեսությունը դիվերսիֆիկացնելու միջոց: Ֆիլիպիններն ունեն ավելի պարզ համակարգ՝ 4 % ռոյալթի դրույք վաճառվող հանքանյութի արժեքից, որը լրացվում 1-5 %-ի սահմաններում և վճարվում որպես փոխհատուցում հողի սեփականտիրոջը¹⁴ կամ ավելացվում 5%-ի չափով, եթե հանքը գտնվում է հանքային արգելոցների տարածքներում: Այսիպիսով, Ֆիլիպիններում ռոյալթի նվազագույն դրույքը կազմում է 5% առավելագույնը 9%՝ կիրառված վաճառվող հանքանյութի արժեքի նկատմամբ:

¹³ Պերուում Ռոյալթի հիմնական կոմպոնենտը հաշվարկվում է ոչ թե շրջանառության կամ համախառն եկամտի, ինչպես ՀՀ-ում այլ գործառնական եկամտի նկատմամբ (համախառն եկամուտ հանած գործառնական ծախսեր): Ընդ որում գործում է երկու զուգահեռ կիրառելի ռոյալթի համակարգ՝ **ճշգրտված ռոյալթի (Modified Mining Royalty)** և **առդյունահանման հատուկ հարկ (Special Mining Tax (SMT))**: Առաջինը կիրառվում է, ինչպես նշվեց, գործառնական եկամտի նկատմամբ՝ ըստ շահութաբերության սանդղակի՝ 1-12%-ի շրջանակներում (օրինակ շահութաբերությունը 0-10%-ի դեպքում 1% գործառնական եկամտի անվանական մեծությունից, 10-15%-ի դեպքում 1.75%,... 80% և ավելի դեպքում 12%), երկրորդը՝ շահույթի նկատմամբ նույն տրամաբանությամբ (օրինակ՝ գործառնական մարժան 0-10%-ի դեպքում 2% շահույթի անվանական մեծությունից, 10-15%-ի դեպքում 2.4%,... 85% և ավելի դեպքում 8.4%)

¹⁴ Եթե հանքի տարածքի հողը համայնքային է վճարվում է համայնքի բյուջեին, եթե ֆեդերալ է՝ պետական բյուջե:

Ռոյալթիների **հաշվարկման մեխանիզմների** առումով, թեև երկրներից յուրաքանչյուրն ունի իր հաշվարկման յուրահատուկ մոտեցումները, սակայն գերթե բոլոր դիտարկված երկրներում հիմք է հանդիսանում վաճառվող ապրանքի մեջ օգտակար հանածոյի (մետաղի) պարունակությունը և տվյալ մետաղի Լոնդոնի բորսայական գները (արժեքային կամ շահույթի մեծությունից կախված ռոյալթիների համար): Ինչ վերաբերում է ռոյալթիի **հաշվարկման բազային**, ապա այստեղ ևս երկրների մոտ առկա է տարբերակված մոտեցում, ինչը դժվարացնում է համեմատությունները: Շահույթի նկատմամբ 10 % ռոյալթին ակնհայտորեն նույնը չէ, ինչ շրջանառության կամ հանքանյութի վաճառքի արժեքի նկատմամբ 10 % Ռոյալթին: Այնուամենայնիվ, սույն նյութում փորձ է արվել դրանք բոլորը խմբավորել մեկ միասնական աղյուսակում (Տես՝ աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Ռոյալթիների դրույթներն ըստ մետաղների և երկրների 2020 (%)

Երկիր	Ռոյալթիի դրույթ - Պղինձ	Ռոյալթիի դրույթ - Կոբալտ	Ռոյալթիի դրույթ - Նիկել
Ավստրալիա (Քուինսլենդ) *	2.5-5 %	2.5-5 %	2.5-5 %
Բրազիլիա (Մինաս Ջիրաիս) *	2 %	2 %	2 %
Կանադա (Օնտարիո) **	5.0 % կամ 10.0%	5.0 % կամ 10.0%	5.0 % կամ 10.0%
Չիլի **	0.5-14 %	-	-
Չինաստան *	2-8 %	2-20 %	2-20 %
Կոնգոյի դեմոկրատական հանրապետություն *	3.50 %	10 %	3.50 %
Ինդոնեզիա *	4 %	-	2-10 %
Ճամայկա *	5 %	5 %	5 %
Ճապոնիա *	1-1.2 %	1-1.2 %	1-1.2 %
Պապուա Նոր Գվինեա *	2.50 %	2.50 %	2.50 %
Պերու **	3-19.9 %	3-19.9 %	3-19.9 %
Ֆիլիպիններ *	5-9 %	5-9 %	5-9 %
Լեհաստան ***	PLN 3.70 (~USD 0.92) 1 մետրիկ տոննայի դիմաց+ հատուկ հարկ****	PLN 4.25 (~USD 1.05) 1 մետրիկ տոննայի դիմաց	PLN 4.25 (~USD 1.05) 1 մետրիկ տոննայի դիմաց
Ռուսաստանի Դաշնություն *	8.00 %	8.00 %	8.00 %
ՀՎ. Աֆրիկյան հանրապետություն *	0.5-7.0 %	0.5-7.0 %	0.5-7.0 %

Աղբյուրը: RMG Consulting 2020.

*Ռոյալթի հանքանյութի արժեքից (վաճառքից), ** ռոյալթի շահույթի մեծությունից կամ շահութաբերությունից կախված, *** Ռոյալթի արտադրական ծավալների նկատմամբ, **** Լեհաստանի ռոյալթիի համար տես Նաև 12-րդ ծանոթագրությունը .

Դիտարկվող երկրներում ռոյալթիների տոկոսադրույքների ցածր շեմերը գտնվում են 0.5-5 %-ի սահմաններում: Ռոյալթիների բարձր դրույքներ սահմանված է Պերուում՝ մինչև 19.9%, սակայն չպետք է մոռանալ, որ այն գանձվում է ոչ թե շրջանառությունից կամ հանքանյութի վաճառքի արժեքից, այլ գործառնական և զուտ շահույթներից: Ընդ որում, Պերուի ռոյալթիները նվազեցվում են ընդհանուր շահութահարկի բազայից, հետևապես և այս հանգամանքները հարկման բեռի տեսանկյունից գլոբալ առումով համադրելի է դարձնում Պերուական ռոյալթիների մոդելը աշխարհի այլ երկրների արժեքից հաշվարկվող ռոյալթի մոդելներին, որտեղ պղնձի միջին ռոյալթին կազմում է 4.0 %՝ հաշվարկված հանքանյութի վաճառքի արժեքից:

Հայաստանում այսօր գործում է ռոյալթիի համակցված մոդելը (արժեքային և շահութաբերությունից կախված տոկոս՝ $4% + \text{շահութաբերություն} * 1/8$), որը նման է Պերուական մոդելի, սակայն ի տարբերություն Պերուական մոդելի հաշվարկվում է շրջանառության նկատմամբ¹⁵: Հարկման բեռի տեսանկյունից՝ ակնհայտ է, որ գլոբալ առումով Հայաստանի այսօրվա Ռոյալթիի համակարգը համադրելի է աշխարհում գործող ռոյալթիների համակարգերի հետ:

Ինչ վերաբերում է կառավրության կողմից Ռոյալթիի նոր առաջարկվող տարբերակին, ըստ որի դուրս է հանվում գործող համակարգում շահութաբերությունից կախված ռոյալթիի կոմպոնենտը, փոխարենը սահմանվում է շրջանառության նկատմամբ բավականին բարձր տոկոսի սանդղակային համակարգ կապված միջազգային գներից, ապա ակնհայտորեն այն չի տեղավորվում միջազգային համադրումներում: Ուստի դրա ընդունելու դեպքում Հայաստանը կդառնա համաշխարհային մակարդակով առանձնացված երկիր (outlier)՝ չհաշված հանքագործության ոլորտում վերը քննարկված առանձնահատկությունները, որը տվյալ առաջարկի համատեքստում կարծես թե ընդհանրապես չի շոշափվել:

¹⁵ ՀՀ-ի գործող ռոյալթիի համակարգի ներդրումից առաջ կատարվել են միջազգային փորձի և ՀՀ իրականության խորը վերլուծություններ՝ ՀԲ-ի, ԱՄՆ-ի և Հայաստանում Ամերիկյան Համալսարանի գիտական ներուժի կողմից: Արդյունքում մասնագիտորեն փաստարկվել է նոր համակարգի ներդրումը, ինչպես նաև հիմնավորվել, որ վերջինս այլ հանքարդյունահանող երկրների համեմատությամբ ֆիսկալ բեռի տեսանկյունից գտնվում է միջին բեռի դիրքերում. Մանրամասն տես՝ «Analysis of Armenia's Mining Fiscal Regime» by Matthew Genascy, AUA Center for Responsible Mining.

Աղյուսակ 3. ՀՀ-ում գործող և առաջարկվող Ռոյալթի դրույթները.

Առաջարկվող Նոր Համակարգ			Գործող Համակարգ
Մետաղի տեսակը	Միջազգային գինը (ԱՄՆ դոլար)	Դրույթաչափը %, շրջանառությունից	Դրույթաչափը %, շրջանառությունից
Պղինձ*	Մինչև 5500	4	4% + շահութաբերություն*1/8
	5501-ից 6500-ը	6	
	6501-ից 7500-ը	13	
	7501-ից 8500-ը	19	
	8501-ից 9500-ը	24	
	9501 -ից 10500-ը	28	
	10501 -ից 15000-ը	39	
	15001 և ավելի	45	
Մոլիբդեն*	Մինչև 10000	4	
	10001-ից 16000-ը	6	
	16001-ից 20000-ը	17	
	20001-ից 25000-ը	26	
	25001-ից 30000-ը	33	
	30001-ից 40000-ը	41	
	40001-ից 50000-ը	45	
	50001 և ավելի	48	

ԱՌԱՋԱՐԿ: Եթե կառավարությունը ցանկանում է ավելի մեծ պրոգրեսիվություն հաղորդել Ռոյալթի գործող համակարգին, որպեսզի էլ ավելի օգտվի պղնձի և մոլիբդենի բարձր գնային ֆոնից (թեև ինչպես արդեն վերը նշվեց դա պետք է անել խիստ զգուշավորությամբ և հաշվի առնել ոլորտի առանձնահատկությունները), ապա առաջարկվում է դիտարկել գործող ռոյալթի փոփոխուն կոմպոնենտի (շահութաբերությունից կախված) նկատմամբ տարբեր սանդղակների սահմանման մոտեցումը (Պերուական մոդելին նման):

2. ԱՅԼ ՀԱՐԿԵՐ - ՀԱՆՔԱՅԻՆ ՎԱՐՁԱՎԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՐԿ (Mineral rent tax)

Համաշխարհային պրակտիկայում երկրների կողմից շատ հազվադեպ է կիրառվում հանքային վարձակալության հարկը, որի սահմանման դեպքում երկրների կառավարությունները փորձում են լրացուցիչ օգուտներ ստանան եկամուտների տեսքով ոլորտի իրենց պատկերացրած միջին շահութաբերությունից բարձր շահութաբերության արձանագրման դեպքում: Ըստ Համաշխարհային Բանկի, սահմանման հանքային վարձակալության հարկը համաշխարհային գներով հաշվարկած օգտակար հանածոների արտադրության արժեքի և դրանց արտադրության ընդհանուր ծախսերի միջև եղած տարբերության նկատմամբ կիրառվող հարկ է, որը վճարվում է օգտակար հանածոների սեփականատիրոջը¹⁶:

Ուսումնասիրվող երկրների շարքում Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը և Պերուն ներկայումս ունեն այս հարկատեսակը կամ դրան վերաբերելի կոմպոնենտները ռոյալթիի համակարգում, մինչդեռ Ավստրալիան կարճ ժամանակով կիրառեց նմանատիպ առանձին հարկ, որը կոչվում էր դաշնային «գերշահութահարկ»:

Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը կիրառում է 50% գերշահութահարկ լրացուցիչ շահույթի նկատմամբ, երբ հանքանյութի գները գերազանցում են կառավարության կողմից սահմանված բազային արժեքը 25 %-ով: Գերշահութահարկով հարկվող շահույթի մասը ենթակա չէ շահութահարկով հարկման: Հարկային բազան՝ գերշահույթը, որոշվում է զուտ շահույթի այն մասից, որը ձևավորվում է հանքանյութի բազային գնից բարձր գնի դեպքում:

Պերուն կիրառում է Լեոնահանքային արդյունաբերության հատուկ բեռ (SMB) ասվածը, որը սակայն ընդհանուր իրավական սկզբունքներով որոշված հարկ չէ: SMB-ն համարվում է «կամավոր» վճար, որը վճարվում է հատուկ ֆոնդին: Մինչև 2011 թ. Ֆիսկալ կայունացման համաձայնագրեր ունեցող հանքարդյունաբերական ընկերությունները կարող են կամավոր հիմունքներով վճարել այն՝ դպրոցներ, հիվանդանոցներ, ճանապարհներ, էլեկտրաէներգիա և ջրամատակարարում կառուցելուն աջակցելու համար, որոնք անհրաժեշտ են ենթակառուցվածքների խոչընդոտները նվազեցնելու համար: Փոխարենը անհրաժեշտության դեպքում կարող են օգտվել հատուկ ֆոնդի միջոցներից՝ իրենց ֆինանսական ժամանակավոր խնդիրները լուծելու համար:

Ավստրալիան 2012 թ. մտցրեց հանքանյութերի ռեսուրսների վարձակալության դաշնային հարկ կամ սուպերշահութահարկ, որը հարկ էր չվերականգնվող ռեսուրսների արդյունահանումից ստացված «գերշահույթների» նկատմամբ: Սակայն Հարկը չկարողացավ կառավարությանը ապահովել մեծ եկամուտներ, ինչպես որ սպասվում էր: Ակնկալվում էր, որ առաջին չորս տարիների ընթացքում կառավարությունը կստանա մոտ 22,5 մլրդ ավստրալիական դոլարի չափով եկամուտ: Սա հետագայում վերանայվեց կառավարության կողմից և 2012 թվականի բյուջեում նախատեսվեց 3 միլիարդ ավստրալիական դոլար: Իրական կյանքում պետությունը հարկը հավաքեց ընդամենը մոտ 200 միլիոն ավստրալիական դոլարի չափով: Հանքանյութերի ռեսուրսների վարձակալության հարկը պարզվեց, որ բարդ է և ծախսատար, և այն չեղյալ է հայտարարվեց 2014 թ.

¹⁶ See World Bank <https://datacatalog.worldbank.org/mineral-rents-gdp-1>

3. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԵԿԱՄՏԱՀԱՐԿ CIT (Շահութահարկ)

Հանքագործության ոլորտի հարկման համակարգերի պարտադիր մաս է ընդհանուր կարգով գանձվող կորպորատիվ եկումտներից հարկը կամ շահութահարկը (CIT): Ըստ ՏՀՀԿ տվյալների բազայի, երկրների մոտ միջին հաշվով ընդհանուր հարկային եկամուտների մոտ 13.3 % -ը գալիս է շահութահարկից (OECD 2019), թեև վերջին երկու տասնամյակների ընթացքում շահութահարկի դրույքները գլոբալ առումով նվազում են: Ըստ ՏՀՀԿ տվյալների բազայի, շահութահարկի միջին մակարդակը երկրներում 23.2% է:

Ինչ վերաբերում է ուսումնասիրված երկրներին, ապա այստեղ կիրառվող շահութահարկի տոկոսադրույքները 15 երկրներից մեծամասնությունում միմյանց մոտ են. երկրներից 12-ի շահութահարկի դրույքաչափերը ընկնում են 20-30 % միջակայքերում: Ճամայկան 33,33 %-ով դրույքաչափով ունի շահութահարկի ամենաբարձր մակարդակը, իսկ Լեհաստանը (19%) և Ռուսաստանի Դաշնությունը (20%) ունեն ամենացածր մակարդակները: Պետք է նաև նշել, որ երկու երկիր՝ Բրազիլիան և Պերուն, ունեն լրացուցիչ պարտադիր հարկեր բիզնեսի վրա, որոնք մեծացնում են բիզնեսի ուղղակի հարկի բեռը: Բրազիլիայում կիրառվում է սոցիալական վճար գուտ շահույթի նկատմամբ (Contribuição Social sobre o Lucro Líquido - CSLL) 9%-ով, որը վճարում է բիզնեսը ուստի և ուղղակի հարկերի դեպքերի առավելագույն տոկոսադրույքը Բրազիլիայում կարելի է համարել 34% (25% շահութահարկ + 9% սոց.վճար, երկուսն էլ գանձվում են նույն բազայից՝ շահույթից): 29.5% Շահութահարկ ունեցող Պերուն 2% հավելավճար է կիրառում կայունության պայմանագրեր ունեցող ընկերությունների համար նույն շահույթի մեծությունից և 8% լրացուցիչ՝ աշխատողների համար՝ որպես սոց. վճար: Ուսումնասիրված երկրների համար շահութահարկի առավելագույն տոկոսադրույքների միջինը (ներառյալ պարտադիր լրացուցիչ կորպորատիվ հարկերը) կազմում է 28.3%, իսկ մեդիանան՝ 29.7%:

Աղյուսակ 4. Շահութահարկի դրույքներն ըստ երկրների 2020 (%)

Երկիր	Շահութահարկ %
Ավստրալիա	27.5-30 %
Բրազիլիա	25% շահութահարկի դրույք, սակայն բիզնեսը վճարում է նաև 9% սոց. վճար՝ շահութահարկի բազայից (Contribuição Social sobre o Lucro Líquido – CSLL). Հետևապես բիզնեսի համար ուղղակի հարկը կազմում է շուրջ 34%՝ հարկվող շահույթից.
Կանադա (Օնտարիո)	26.5 % (Օնտարիոյի շահութահարկի դրույքը 11.5 % իսկ ֆեդերալ շահութահարկը 15 %).
Չիլի	25-27 %
Չինաստան	25.0 %
Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն	30.0 % (Շահութահարկի ստանդարտ դրույքը 35 %, սակայն հանքագործությունում կիրառվում է նվազեցված դրույք)
Ինդոնեզիա	22% (սկսած 2022-ից 20%), 3% նվազեցում է թույլատրվում սովորական դրույթից, եթե ընկերությունը ցուցակված է Ինդոնեզիայի Բորսայում (ընդհանուր՝ 19%, իսկ 2022-ից 17%)
Ճամայկա	33.33 % կարգավորվող ընկերությունների համար և 25%՝ չկարգավորվող ընկերությունների համար:
Ճապոնիա	29.7 %
Պապուա Նոր Գվինեա	30.0 %
Պերու	29.5 %, Լրացուցիչ 2% կայունության պայմանագիր ունեցող ընկերությունների դեպքում. ևս 8 % աշխատակիցների շահույթին մասնակցության վճար (սով.վճար):
Ֆիլիպիններ	25 %, նաև գանձվում է տեղական բիզնեսի հարկ (առավելագույնը 2% համախառն վաճառքից).
Լեհաստան	19% (ՓՄՁ-ների համար նվազեցված 9% դրույք է կիրառվում, որոնց տարեկան շրջանառությունը չի գերազանցում 1.2 մլն Եվրոն՝ ներառյալ ԱԱՀ-ն
Ռուսաստանի Դաշնություն	20.0 %
ՀՎ. Աֆրիկյան Հանրապետություն	28.0 %

Աղբյուրը: OECD Tax Database, RMG Consulting 2020.

Հայաստանում ներկայումս գործող շահութահարկի դրույքը 18%-է, որը կարելի է համարել դիտարկվող երկրների ցանկում ցածր շեմ ունեցող երկրներին համադրելի դրույք: Ամեն դեպքում ևս մեկ անգամ պետք է նշել, որ ներկայացված շահութահարկի դրույքները անվանական դրույքներ են և հաշվի չեն առնում հարկման համակարգերում կիրառվող ծախսերի թույլատրված նվազեցումների տեսակները, հետախուզական ծախսերի կապիտալացման կանոնները, ամորտիզացիաները, արտոնյալ ժամանակահատվածները, չհարկվող շեմերը և այլ հարկման տեսանկյունից կարևոր պարամետրեր, որոնց կիրառման դեպքում արդյունավետ դրույքները կարող են այլ լինել ըստ երկրների:

4. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐ

Երկրների Միջազգային փորձը փաստում է, որ արտահանման սահմանափակումներ՝ այդ թվում արտահանման մաքսատուրքեր, երբեմն երկրները կիրառում են՝ նպատակ հետապնդելով սահմանափակել միջանկյալ ապրանքների արտահանումը դեպի դուրս և փոխարենը զարգացնել ներքին տնտեսությունում վերամշակման հետագա օղակները: **Որևէ երկրում կառավարություններն այս գործիքի կիրառման դեպքում չեն դնում ֆիսկալ կամ բյուջեի եկամուտների ապահովման նպատակ**¹⁷: Ընդ որում դիտարկվող երկրներից շատ քչերն են օգտվում արտահանման մաքսատուրքերի գործիքից՝ փորձելով իրենց տնտեսական նպատակներին հասնել ներքին հարկման համակարգերի ճիշտ նախագծման միջոցով:

Աղյուսակ 5. Արտահանման մաքսատուրքերն ըստ երկրների.

Երկիր	Արտահանման Մաքսատուրք - Պղինձ	Արտահանման Մաքսատուրք - Ցինկ	Արտահանման Մաքսատուրք - Նիկել
Ավստրալիա	Առկա չէ	Առկա չէ	Առկա չէ
Բրազիլիա	Առկա չէ	Առկա չէ	Առկա չէ
Կանադա (Օնտարիո)	Առկա չէ	Առկա չէ	Առկա չէ
Չիլի	Առկա չէ	Առկա չէ	Առկա չէ
Չինաստան	10% հանքաքարի արժեքից և 10-15% մշակված մետաղի արժեքից:	30% հանքաքարի արժեքից և 10-15% մշակված մետաղի արժեքից:	Առկա չէ
Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն	Առկա չէ	Առկա չէ	Առկա չէ
Ինդոնեզիա	20% հանքաքարի արժեքից:	Առկա չէ	20% հանքաքարի արժեքից:
Ճամայկա	Առկա չէ	Առկա չէ	Առկա չէ
Ճապոնիա	Առկա չէ	Առկա չէ	Առկա չէ
Պապուա Նոր Գվինեա	Առկա չէ	Առկա չէ	Առկա չէ
Պերու	Առկա չէ	Առկա չէ	Առկա չէ
Ֆիլիպիններ	Առկա չէ	Առկա չէ	Առկա չէ
Լեհաստան	Առկա չէ	Առկա չէ	Առկա չէ
Ռուսաստանի Դաշնություն	10% արժեքից, բայց ոչ պակաս 84 Եվրո 1 տ-ի դիմաց, և 15% արժեքից, բայց ոչ պակաս 1226 Եվրո 1 տ-ի դիմաց, (հիմնականում մշակված մետաղական արտադրանքի վրա)	Ցինկի թափոններ և ձուլակտորներ, արժեքի 10%-ից բայց ոչ պակաս 60 Եվրո 1 տոննայի դիմաց	10% արժեքից, բայց ոչ պակաս 240 Եվրո 1 տ-ի դիմաց, և 15% արժեքից, բայց ոչ պակաս 2321 Եվրո 1 տ-ի դիմաց, (հիմնականում մշակված մետաղական արտադրանքի վրա)
ՀՎ. Աֆրիկյան Հանրապետություն	Առկա չէ	Առկա չէ	Առկա չէ

¹⁷ Բացառություն է կազմում ՌԴ-ն, որը 2021թ-ի հունիս 25-ի թիվ 988 որոշմամբ լրացուցիչ մաքսատուրքեր սահմանեց որոշ ապրանքատեսակների արտահանման նկատմամբ և պաշտոնյաների բարձր մակարդակով հայտարարեց նաև բյուջեի եկամուտների ապահովելը:

Աղբյուրը: ICSG, WTO Global Tariff Database.

Ինչպես երևում է վերը բերված աղյուսակից, երկրները սովորաբար ձեռնպահ են մնում արտահանման մաքսատուրքերի կիրառությունից: Այնուամենայնիվ դրանք կիրառելու դեպքում հստակ ուրվագծվում է տվյալ երկրի կառավարությունների որդեգրած քաղաքականությունների նպատակները: Այսպես, օրինակ, Չինաստանը մաքսատուրքի միջոցով սահմանափակել (թանկացրել) է պատրաստի մետաղների արտահանումը՝ փոխարեն դրանք օգտագործվում են մետաղյա իրերի (շինարարական (մետաղալարեր, խողովակներ) և լայն սպառման ապրանքների) ներքին արտադրության մեջ, որի առաջատարներից է համարվում Չինաստանը:

Հայաստանում 2021թ-ի սեպտեմբերից ներդրվեց արտահանման մաքսատուրք՝ պղնձի խտահանքի, մոլիբդենի և մոլիբդենի խտահանքի համար: Ընդ որում այն սահմանվեց ոչ թե արժեքային այլ ֆիքսված գումար տոննայից. 160,000 դրամ 1տ պղնձի խտահանքի արտահանման դեպքում, 800,000 և 1,000,000 ՀՀ դրամ մոլիբդենի խտահանքի և մոլիբդենի արտահանման դեպքում: Բնականաբար այդ մոտեցումը ոչ արդարացի կերպով հարաբերականորեն ավելի ցածր ֆիսկալ բեռ է սահմանում մետաղի բարձր պարունակությամբ խտանյութ արտադրող հանքերի (ընկերությունների) համար և համեմատաբար բարձր ֆիսկալ բեռ ավելի ցածր պարունակությամբ խտանյութ արտադրող հանքերի համար¹⁸: Ավելին՝ այս մոտեցումը արհեստականորեն տնտեսվարողների մոտ մեծացնում է շարժառիթը, որ ոչ թե օպտիմալ հարաբերակցությունը գտնի մետաղի կորզման ցուցանիշի և խտահանքում մետաղի պարունակության միջև՝ ուստի և ավելի խնայողաբար մոտենալով ընդերքի պաշարներին, այլ ցանկացած գնով ունենալու հարաբերականորեն բարձր պարունակությամբ խտահանք՝ թեկուզև հնարավոր էր ավելին կորզել հանքաքարից սակայն տնտեսապես ավելի շահավետ է բարձր պարունակությամբ խտահանք արտահանել՝ կիրառվող մաքսատուրքի մեխանիզմի պատճառով:

Ավելին, օրենսդրական փոփոխություններով կառավարությունը սահմանել է պետական տուրք մաքսային հսկողության ենթակա ապրանքների տոննայից՝ առանց նշելու թե դա վերաբերում է չոր թե թաց կշռին, որոնց միջև տարբերությունը գործնականում կազմում է շուրջ 8-9%: Մինչդեռ թույլտվություններն ու լիցենզիաները կառավարությունը տրամադրելիս նշում է խտահանքի թաց կշիռը: Ի դեպ, որպես կանոն խտահանքների դիմաց վճարումների բոլոր հաշվարկները գնորդների հետ տարվում են խտահանքի չոր կշռի հաշվարկով: Ստացվում է, որ տնտեսվարող դեռ մի բան էլ լրացուցիչ պետք է վճարի «օդի և ջրի» քաշի դիմաց:

Եթե նույնիսկ զուգահեռներ անց կացվի ՌԴ կողմից կիրառվող (որը ևս բացառիկ է աշխարհի մասշտաբով) և ՀՀ-ում ներդրված նոր մաքսատուրքերի մեխանիզմների նկատմամբ, ապա ՌԴ տարբերակն ավելի արդարացի է, քանի որ ունի նաև արժեքային կոմպոնենտ (արժեքից տոկոս):

¹⁸ Այսինքն այն հնաբերը (ընկերությունները) որոնց խտահանքներում մետաղների պարունակությունը հանքաքարի վերամշակման արդյունքում ստացվում է 24% և բարձր, հարաբերականորեն ավելի քիչ ֆիսկալ բեռ կունենան քան այն հանքերը որտեղ խտահանքում մետաղի պարունակությունը գտնվում է 22-23%-ի շրջանակներում (օրինակ Կաշենի հանքավայրում)

Ինչ վերաբերում է ՀՀ-ում ներդրված արտահանման մաքսատուրքերի տնտեսական նպատակներին՝ ապա այն այս պահի դրությամբ բացառապես ֆիսկալ նպատակ է հետապնդում և չունի տնտեսական այլ նպատակների թիրախավորումներ, ինչպես միջազգային փորձն է պահանջում: Բնականաբար դա խեղումներ է մտցնելու ոլորտում, քանի որ հաշվի չի առնում ինչպես վերը քննարկված հանքագործության ոլորտի առանձնահատկությունները այնպես էլ ընկերությունների մակարդակով առանձին հանքերի էկանոմիկաները՝ դնելով վերջիններիս անհավասար պայմաններում:

IV. ԲԵՅՁ ՄԵԹԼԶ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԿՄԱՆ ԲԵՌԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Բեյզ Մեթլզ ընկերությունը հիմնադրվել և գործում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, համարվում է Արցախի բյուջեին հարկեր վճարող թիվ 1 հարկատուն՝ մինչ պատերազմը ԱՀ բյուջե վճարելով շուրջ 19 մլրդ դրամ կամ 40 մլն ԱՄՆ դոլարի հարկ: Վերջինս շահագործում է Կաշենի հանքավայրը, որը Հայաստանի այլ հանքավայրերի համեմատությամբ կարելի է համարել ոչ մեծ չափսի հանքավայր: Երկրաբանության տեսանկյունից հանքաքարի արդյունահանումն ու վերամշակումն ունի որոշակի բարդություններ՝ հաշվի առնելով հանքի բաղադրությունը, կարծրությունը մակբացման բարձր գործակից (շուրջ 2-2.3) և այլ պարամետրեր:

Մինչ 2020թ-ի Արցախյան պատերազմը, ընկերությունը կարողացել էր իր արտադրողականությունը հասցնել տարեկան շուրջ 6.0 մլն տ հանքաքարի վերամշակման, սակայն Արցախյան պատերազմն անդառնալի հետևանքներ թողեց նաև ընկերության գործունեության վրա՝ երբ գործնության համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ անցան Ադրբեյջանի տիրապետության տակ: Ներկայումս ընկերությունն ապրում է իր պատմության ամենադժվարին ժամանակները, աշխատում է իր մինչ պատերազմյան հզորությունների ¼-րդ մասով, թեև հասկանալի պատճառներով ընկերությունը կրճատել է աշատակիցների թվաքանակը ոչ ավել քան 30%-ով¹⁹ (նպատակ հետապնդելով պահպանել ԱՀ տարածքում անհրաժեշտ զբաղվածության մակարդակը): Ընկերությունը պարտավորվել է նաև զգալի ներդրումներ կատարել նոր ենթակառուցվածքներ ստեղծելու և որոշ չափով վերականգնելու իր արտադրական հզորությունները մինչ հանքաքարի վերամշակման տարեկան 4.5 մլն տոննայի:

Այս բաժնում ներկայացված է պարզ համեմատական հաշվարկ, թե ընկերության հարկման բեռը (ռոյալթիի և շահութահարկի գծով միայն) պղնձի գների տարբեր մակարդակներում և ռոյալթիի գործող օրենսդրության, գործող օրենսդրության և ներդրված պետական տուրքի, ինչպես նաև ռոյալթիի նոր օրենսդրական առաջարկի շրջանակներում ինչպես է փոփոխվում: Հաշվարկների համար ենթադրվել է, որ ընկերությանը հաջողվում է վերականգնել արտադրողականությունը մինչ տարեկան 4.5 մլն տոննա հանքաքարի վերամշակման չափով:

Նշենք, որ հաշվարկներում ներառված չեն ընկերության կողմից նոր ենթակառուցվածքների ստեղծման և ընկերության գործունեության շարունակականության ապահովման համար անհրաժեշտ կապիտալ ներդրումները,

¹⁹ Ընկերությունը մինչ պատերազմը ապահովել է 1340-1500 աշխատատեղ (ներառյալ գործարքային և սեզոնային աշխատակիցները):

ինչպես նաև ԲՄ ընկերության առկա վարկի մարումները²⁰: Այլ կերպ ասած հաշվարկվել է, թե յուրաքանչյուր հարկային ռեժիմի դեպքում ո՞րն է այն գնային մակարդակը որից ներքև ընկերության ընթացիկ (գործառնական) գործունեությունը դառնում է ոչ շահութաբեր (գնային շեմը ներկված է կանաչ գույնով): Բնականաբար, այդ գնային շեմերը կանխիկ հոսքերի տեսանկյունից, յուրաքանչյուր դեպքում կտեղափոխվի վերև, եթե ներառվեն նաև կապիտալ ծախսերն ու վարկի սպասարկման ծախսերը²¹: Ստորև աղյուսակներում ներկայացված է երեք դեպքերի հաշվարկները: Աղյուսակներում բերված տեղեկատվությունը տալիս է հետևյալ 4 եզրահանգումների հնարավորություն.

Ա. Ընկերության սահմանային գինը գործող օրենսդրության պայմաններում, առանց հաշվի առնելու պետական (արտահանման) տուրքի հանգամանքը, 6,500 ԱՄՆ դոլարն է, որից ներքև գտնվելու դեպքում ընկերությունը դառնում է գործառնական վնասաբեր:

Բ. Պետական տուրքի կամ ռոյալթիների առաջարկվող նոր համակարգի կիրառումը ընկերության համար ներկա պայմաններում գրեթե կրկնակի չափով բարձրացնում է հարկային բեռը:

Գ. Երեք համեմատական համակարգերից ամենակործանարարը ընկերության համար համարվում է պետական (արտահանման) տուրքի կիրառումը, որի դեպքում սահմանային գինը ընկերության համար դառնում է \$8,500,

Դ. Քանի որ կապիտալ ծախսերը և վարկային մարումները չեն ներառվել հաշվարկներում, որպեսզի ցույց տրվի ընթացիկ գործունեության մասով իրավիճակի փոփոխությունը տարբեր ռեժիմների դեպքում, ապա իրական կյանքում վերջիններիս անխուսափելի կատարումը երկու նոր ռեժիմների դեպքում ակնհայտ ընկերության դնելու են ծանր վիճակում և մղեն վնասաբերության տիրույթ:

Գործող օրենսդրություն առանց արտահանման տուրքի

Գին	5,500	6,500*	7,500	8,500	9,500	10,500	15,000
Հասույթ - մլն ԱՄՆ դոլար	68.4	83.9	99.4	114.9	130.4	145.9	215.6
Հարկեր - մլն ԱՄՆ դոլար	2.7	5.1	10.0	14.9	19.8	24.7	46.7
Հարկեր/հասույթ հարաբերակցություն (Հարկային Բեռ)	4%	6%	10%	13%	15%	17%	22%

²⁰ ԲՄ ընկերության վարկի մնացորդի արժեքը շուրջ \$29 մլն է, որն ընկերությունը պետք է մարի մինչ 2023թ-ի վերջը:


²¹ Այսինքն, որպեսզի ընկերությունն ունենա դրական կանխիկ հոսքը՝ կապիտալ ծախսերից և վարկի սպասարկումից հետո, բնականաբար պղնձի գները պետք է լինեն ավելի բարձր:

Գործող օրենսդրությունն արտահանման տուրքով

Գին	5,500	6,500	7,500	8,500	9,500	10,500	15,000
Հասույթ - մին ԱՄՆ դոլար	68.4	83.9	99.4	114.9	130.4	145.9	215.6
Հարկեր - մին ԱՄՆ դոլար	26.4	28.1	30.9	34.3	39.2	44.1	66.0
Հարկեր/հասույթ հարաբերակցություն (Հարկային Բեռ)	39%	34%	31%	30%	30%	30%	31%

Նոր օրենսդրական նախաձեռնության պարագայում

Գին	5,500	6,500	7,500	8,500	9,500	10,500	15,000
Հասույթ - հազար ԱՄՆ դոլար	68,4	83,9	99,4	114,9	130,4	145,9	215,6
Հարկեր - մին ԱՄՆ դոլար	2,7	5,4	14,7	24,8	39,6	46,0	94,0
Հարկեր/հասույթ հարաբերակցություն (Հարկային Բեռ)	4%	6%	15%	22%	30%	31%	44%



Պետք է նաև նշել, վերը ներկայացված հաշվարկները հաշվի չեն առնում հանքի արդյունահանելի ռեսուրսների կամ որ նույն է պաշարների վրա տուրքի կամ ռոյալթիի առաջարկվող նոր համակարգի բացասական ազդեցությունները: Ուստի էական է այստեղ նաև նա, որ նոր ներդրված արտահանման մաքսատուրքի (պետական տուրքի)

ռեժիմը կամ առաջարկվող նոր ոռոյելիների համակարգն ըստ CIMVAL-ի²² ստանդարտների կրճատելու են Կաշենի հանքի տնտեսապես արդյունահանելի պաշարները²³:

Հետևապես՝ թե գործող մաքսատուրքերը թե առաջրկվող ոռոյալիների նոր ռեժիմը կործանարար են լինելու հանքի համար՝ հանգեցնելով վերջինիս վնասաբերության և հանքի գործունեության դադարեցման: Արդյունքում պետությունը թեև կարող է կարճաժամկետ օգուտներ ունենալ լրացուցիչ հարկային մուտքերի տեսքով, սակայն էապես տուժելու է երկարաժամկետում թե պոտենցիալ հարկային մուտքերի զուտ ներկա արժեքի մասով թե երկրի զուտ հարստության նվազման մասով, քանի որ վստահաբար կարելի է պնդել, որ տնտեսապես արդյունահանելի հանքային ռեսուրսների (պաշարների) կրճատում նոր հարկման ռեժիմների (պետական տուրքի կամ նոր ոռոյալի) դեպքում դիտվելու է նաև այլ հանքերի մասով ևս (տես նաև Հավելված 1):

²² Կանադայի հանքարդյունաբերության, մետալուրգիայի և նավթային ինստիտուտի հանքային ակտիվների գնահատման հատուկ հանձնաժողով (CIM -Canadian Institute of Mining, Metallurgy and Petroleum, CIMVAL - CIM Special Committee on Valuation of Mineral Properties),

²³ Որի գնահատումը մոդելների օգնությամբ նյութը կազմելու ընթացքում արվում է և անհրաժեշտության պարագայում լրացուցիչ կներակայցվի:

V. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Որպես ամփոփում, ներկայացված նյութից կարելի է առանձնել հետևյալ արդյունքային թեզերը:

1. Հանքագործության ոլորտում հարկման ռեժիմը վերաբերում է նրան, թե օգտակար հանածոներ արդյունահանող երկրներում կառավարություններն ինչպես են կիրառվող մի շարք գործիքների միջոցով որոշում հանքարդյունաբերական նախագծերից ստացվող եկամուտների բաշխումը պետության և ներդրողների միջև (Government take):
2. Միջազգային փորձը և գրականությունը խորհուրդ են տալիս, որ ոլորտում հարկման ռեժիմներ նախագծելիս և սահմանելիս կառավարություններն ուշադրություն դարձնեն ոլորտի առնձնահատկություններին, որոնք կարելի է խմբավորել հետևյալ 4 հիմնական խմբերում
 - a. Հանքերի կյանքի սահմանափակ տևողության՝ հետևապես և ներդրողի ապագա կանխիկ հոսքերի սահմանափակվածություն
 - b. Պահանջվող սկզբնական ներդրումների (ծախսերի) բարձր մակարդակ և վարկային ռեսուրսներով արդյունահանման ծրագրերի էական ծանրաբեռնվածություն
 - c. Հանքերի շահագործման տարբեր ծախսային կառուցվածքներ՝ կապված աշխարհագրական, որակական և այլն գործոններով
 - d. Ոլորտի բարձր ռիսկայնություն և իրացման շուկաների բարձր գնային տատանողականություն:
3. Եթե երկրների կառավարությունները փորձում են հանքի շահագործման ծրագրի կես ճանապարհից փոփոխել հարկման ռեժիմի հետ կապված խաղի կանոնները, առավել ևս առանց հաշվի առնելու վերը ներկայացված ոլորտի առանձնահատկությունները, ապա մեծ է ռիսկը, որ դրանով իսկ խեղումներ մտցվի ոլորտում, իսկ երկիրը (կառավարություն, ներդրող և հասարակություն) երկարաժամկետում չկարողանա վերցնել առավելագույն օգուտները հանքի շահագործումից:
4. Հարկման համակարգերի ներքո գործիքները, որով կառավարությունները «վերցնում» են հանքագործությունից իրենց մասնաբաժինը, որպես բնական պաշարների սեփականատերեր, միջազգային պրակտիկայում երեքն են քննարկվում. Ռոյալթիներ, շահութահարկ և հանքանյութի վարձակալական վճարներ, ընդ որում վերջինը շատ հազվադեպ է հանդիպում երկրների փորոճում:
5. Ռոյալթիների երեք տեսակներից՝ արժեքից (ad valrume), շահույթից (profit/income based) և ծավալներից (Volume based) երկրները հիմնականում օգտվում են առաջին երկու գործիքից, որոնք թույլ են տալիս մետաղների շուկայական գնային տատանումները թիրախավորել:
6. Առավել արդարացի պրոգրեսիվության համակարգ կարողանում է հաղորդել շահույթից կամ շահութաբերությունից կախված սանդղակային Ռոյալթիները կամ դրանց համակցված տարբերակը (և շրջանառությունից և շահութաբերությունից կախված), քանի որ հաշվի է առնում տվյալ հանքի հետ կապված ընկերության գործառնական ծախսերը:

7. Ըստ երկրների ոռոյալթիների դրույքաչափերը տատանվում են նվազագույնը 2-3%-ից մինչև 10-12%-ի շրջանակներում (ծայրակետային երկրները հաշվի չառած), սակայն կարևոր է նաև այն թե ինչ բազայի նկատմամբ է սահմանվում՝ շրջանառության կամ վաճառվող հանքանյութի արժեքի թե գերծառնական եկամտի կամ շահույթի նկատմամբ: Ուստի շրջանառությունից 4-5% ոռոյալթի համակարգ ունեցող երկրներում հարկման բեռը կարող է նույնը լինել ինչ օրինակ գործառնական շահույթի նկատմամբ 12-15% ոռոյալթի ունեցող երկրում: Սակայն դրա ճշգրիտ գնահատումը պահանջում է օրինակելի հանքի մոդելի միջոցով գնահատում, որը դուրս է այս նյութի շրջանակներից, թեև պահանջի դեպքում այն ևս կարող է ներկայացվել:
8. Ավելի լավ երկրաբանություն և հարուստ հանքեր ունեցող երկրներում, որտեղ հանքաքարերի որակական հատկությունները բարձր են և ավելի նվազ ծախսերով են խտացվում, հալվում և գտվում, այդ երկրները կարողացել են ավելի բարձր ոռոյալթներ սահմանել (օրինակ Չիլիում և Պերույում) ի համեմատ ցածր որակի պաշարներ ունեցող երկրների, որոնք նաև ներդրումներ ներգրավելու խնդիրներ են ունենում (օրինակ Ավստրալիայում և Ճամայկայում):
9. Հանքարդյունաբերություն ունեցող դիտարկված երկրներում շահութահարկի դրույքներն ի համեմատ ոռոյալթների ավելի քիչ ցրված են և տատանվում են 20-30%-ի շրջանակներում, թեև վերջին տարիներին երկրների մոտ նկատվում է շահութահարկի դրույքների նվազման մկտումները (օրինակ Ինդոնեզիայում):
10. Արտահանման մաքսատուրքերի կիրառությունը դիտարկվող երկրներում քիչ է հանդիպում, իսկ դրանց կիրառելու դեպքում էլ կառավարությունները վերջիններիս ամրագրում են ոչ թե ֆիսկալ (բյուջեի եկամուտներ ապահովում) այլ տնտեսական նպատակ՝ թիրախավորելով օրինակ ավելի բարձր արժեք ստանալու վերամշակման հետագա օղակների ներքին արտադրության զարգացումը: Բացառություն է կազմում ՌԴ-ն որը միայն վերջերս ներդրեց ֆիսկալ նպատակով ժամանակավոր արտահանման տուրք:
11. Հայաստանում ներկայիս ոռոյալթների և շահութահարկի համակարգը համադրելի է միջազգային պրակտիկային և մակրո առումով կարելի է ասել, որ Հայաստանը գտնվում է դրույքների տեսանկյունից միջին - միջին բարձր ֆիսկալ բեռ ունեցող երկրների շարքում²⁴:
12. Կառավարության կողմից նոր առաջարկվող ոռոյալթի համակարգը խիստ վտանգավոր է, քանի որ ա. էապես բարձրացնում է հարկման բեռն արդեն իսկ գործող հանքերի համար գործունեության կես ճանապարհին բ. հաշվի չի առնում հանքերի երկրաբանությունները և շահագործող ընկերությունների ծախսերի կառուցվածքը (քանի որ հանվում է շահույթից կախված ոռոյալթի կոմպոնենտը և փոխարենը ներդրվում է գնային միջակայքերից կախված արժեքից տոկոս համակարգը), գ. համադրելի չէ միջազգային փորձի հետ և ներդրվելու դեպքում Հայաստանը կլինի հարկման ծանր բեռի տեսանկյունից ծայրակետային երկիր (outlier):

²⁴ Մետաղների բարձր գների պայմաններում ՀՀ-ում ներկայումս գործող Ռոյալթի շահութաբերությունից կախված կոմպոնենտն էապես բարձրացնում է ոռոյալթի փաստացի դրույքը, որը փոխհատուցում է ՀՀ-ում շահութահարկի հարաբերականորեն ցածր դրույքի ազդեցությունը հանքագործության ոլորտի ընկերությունների հարկման ընդհանուր բեռի վրա՝ քննարկվող երկրների համատեքստում:

13. Հայաստանում սեպտեմբերին ներդրված արտահանման մաքսատուրքերը (պետական տուրքը արտահանման լիցենզիայի և թույլտվության համար) ևս ոլորտում խեղումներ են մտցնելու և նույնիսկ ՌԴ-ի համեմատությամբ Հայաստանի համակարգն ավելի կոշտ է և անարդարացի՝ որը ենթակա է շուրջափոյթ վերանայման:
14. Կիրառվող արտահանման մաքսատուրքերի համակարգի պահպանումը կամ ռոյալթիի առաջարկվող նոր համակարգի ներդրումը երկարաժամկետում **մեծ հավանականությամբ** կհանգեցնի ՀՀ-ում որոշ հանքերի շահագործման ծրագրերի վնասաբերության՝ ուստի և շահագործող ընկերությունների գործունեության դադարի (առնվազն Կաշենի հանքի շահագործման մասով):
15. Եվ ներդրված արտահանման մաքսատուրքի (պետական տուրքի) համակարգը և առաջարկվող նոր ռոյալթիները հանգեցնելու են հանքերի արդյունահանելի ռեսուրսների (պաշարների) կրճատման՝ հետևաբար և հանքերի արժեքների էական նվազման: Արդյունքում թեև կարճաժամկետում կառավարությունը հնարավոր է լրացուցիչ հարկեր հավաքի՝ մեծացնելով պետական հատվածի զուտ հարստությունը, սակայն երկարաժամկետում ունենալու է և հավաքագրվող եկամուտների զուտ ներկա արժեքի՝ հետևաբար և պետական հատվածի զուտ հարստության նվազում և ընդհանրապես երկրի զուտ հարստության կրճատում, քանի որ էապես կրճատվելու է նաև մասնավորի զուտ հարստությունը (տես նաև Հավելված 1):
16. Քանի որ ՀՀ-ում շահագործվող հանքերը գտնվում են Երևանից հեռու, մարզերում, իսկ որոշներն էլ սահմանամերձ գոտիներում, ուստի 14-րդ կետում շարադրած ռիսկի (մեծ հավանականությամբ) նյութականացման դեպքում սոցիալ տնտեսական հետևանքը՝ հանքի տեղակայման տարածաշրջանի ՀՆԱ-ի և մեկ շնչին բաժին ընկնող բնակչության եկամտի նվազումը, հակասելու է կառավարության որդեգրած տարածքների համաչափ զարգացման կոնցեպտին:
17. Այն հարկը, որը կառավարությունն ակնկալում է ստանալ կարճաժամկետ հատվածում միանշանակ չի փոխահատուցելու այն տնտեսական վնասները, որը լինելու են վերոնշյալ ռիսկերի նյութականանալու և հանքերի շահագործման ծրագրերի փակման պարագայում:

VI. ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՀԱՆՔԵՐԻ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ CIMVAL-Ի ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԸ ԵՎ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԸ

Յուրաքանչյուր երկիր ունի հանքային կամ օգտակար հանածոյի ռեսուրսներ, որոշները դրանցով հարուստ են որոշները աղքատ, սակայն յուրաքանչյուր երկրի հանքային ռեսուրսները գնահատելի մեծություն են՝ տնտեսական և ֆինանսական տեսանկյունից: Եթե հանքային ռեսուրսը գտնվում է ընդերքում և չկա որևէ նախագիծ կամ արդյունահանման ծրագիր, ապա այդ ռեսուրսները **երկրի զուտ հարստության** տեսանկյունից էական արժեք չեն ներկայացնում, մինչդեռ գործող հանքերը կամ հանքերի շահագործման պատրաստի նախագծերը սովորաբար ունենում են արժեք, որոնք մեծացնում են երկրի զուտ հարստությունը²⁵:

Համաշխարհային պրակտիկայում գործում են համընդհանուր ընդունված ստանդարտներ և ուղեցույցեր, որոնց հիման վրա գնահատվում են հանքային պաշարները և **հանքի արժեքը**: Այդպիսի ստանդարտներ և ուղեցույցեր մշակվել են Կանադայի հանքարդյունաբերության, մետալուրգիայի և նավթային ինստիտուտի (CIM - Canadian Institute of Mining, Metallurgy and Petroleum) և վերջինիս ներքո հանքային ակտիվների գնահատման հատուկ հանձնաժողովի կողմից (CIMVAL - CIM Special Committee on Valuation of Mineral Properties), որը հրապարակվել է 2003թ-ին որպես «Հանքային ակտիվների գնահատման չափանիշներ և ուղեցույցներ» («CIMVAL ստանդարտներ»²⁶): Մեկ այլ ստանդարտ, որը միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվում է CIMVAL-ի հետ հանքերի արժեքների գնահատման համար, հանդիսանում է Հանքաքարի պաշարների համատեղ կոմիտեի 2004թ-ի կանոնները («JORC» - 2004)²⁷

Հանքի արժեքի գնահատման համար ստանդարտները սահմանում են գնահատման հիմքում ընկած երկու կարևոր հասկացություններ «հանքային ռեսուրսներ - mineral resources» և «հանքաքարի պաշարներ - ore reserves»²⁸: CIM-ը հանքային ակտիվները դասակարգում է ռեսուրսների կամ պաշարների՝ կախված այն աստիճանից, թե որքանով են դրանք ուսումնասիրված ինչպես իրենց ֆիզիկական հատկությունների, այնպես էլ նման ակտիվի **արդյունահանման տնտեսական կենսունակության** տեսանկյունից: Վերջինս համարվում է անկյունաքարային CIMVAL-ի և JORC-ի ստանդարտների փիլիսոփայության տեսանկյունից, այսինքն այս ստանդարտները մեծ կարևորություն են տալիս հանքի պաշարների տեսակների և դրանց շահագործման ծրագրի **փնտրեսապես արդարացված լինելուն**, ինչը գնահատվում է նախնական տեխնիկատնտեսական ուսումնասիրության (prefeasability study) կամ ամբողջական տեխնիկատնտեսական ուսումնասիրության (feasibility study) փուլերում՝ մոդելային

²⁵ Երկրի ազգային զուտ հարստությունը = Մասնավոր հատվածի զուտ հարստություն + Հանրային Հատվածի զուտ հարստություն:

²⁶ CIMVAL-ը 2019թ-ին հրապարակել է CIMVAL ստանդարտների թարմացում՝ «Հանքային ակտիվների գնահատման կանոններ» վերնագրով (թվագրված 29 նոյեմբերի 2019 թ.):

²⁷ CIMVAL-ը և JORC (The Australasian Code for Reporting of Exploration Results, Mineral Resources and Ore Reserves)-ը, միջազգայնորեն ընդունված երկու հիմնական ստանդարտներ են, որոնք մշակվել են Կանադայում և Ավստրալիայում՝ հանքարդյունաբերության ռեսուրսներով հարուստ երկու երկրներում, Ավստրալիայի արժեթղթերի բորսայում և Տորոնտոյի ֆոնդային բորսայում ցուցակման կանոնների շրջանակներում (երկու ֆոնդային բորսաներ, որտեղ գրանցված են աշխարհի հանքարդյունաբերական ընկերությունների մեծամասնությունը):

²⁸ Տես՝ CIM-ի սահմանումներ - CIM Definition Standards for Mineral Resources & Mineral Reserves, էջ 4-6:

մոտեցմամբ: Ընդ որում ուսումնասիրությունների ընթացքում հաշվի են առնվում բազմաթիվ գործոններ, ինչպիսիք են տնտեսական՝ այդ թվում **կիրառելի հարկային համակարգերի**, իրավական, հանքարդյունաբերության, մետաղագործության, ենթակառուցվածքների շուկայավարման՝ ներառյալ օգտակար հանածոյի գների, բնապահպանական, սոցիալական, պետական կառավարման վերաբերող և այլ գործոններ:

CIM-ի կողմից հանքի արժեքի գնահատման ընթացքում կիրառվող որոշ կարևոր հասկացությունների սահմանումները ներկայացված են ստորև.

Հանքային ռեսուրսներ (Mineral Resource) - հանդիսանում են տնտեսական հետաքրքրություն ներկայացնող պինդ նյութի կենտրոնացում կամ առաջացում երկրի ընդերքում կամ նրա վրա, այնպիսի ձևով, հատկությունով (պարունակությունով) կամ որակով և քանակով, որի համար կան ողջամիտ հեռանկարներ վերջնական տնտեսական արդյունահանում իրականացնելու համար:

Հանքային ռեսուրսները, ըստ երկրաբանական վստահության աստիճանի բաժանվում են ենթադրվող, նշված և չափված (inferred, indicated and measured) ենթախմբերի: Ենթադրված ռեսուրսն ունի ամենաքիչ երկրաբանական վստահության աստիճան քան նշված և չափվածը, և նշվածն ավելի պակաս՝ քան չափվածը:

Ենթադրվող հանքային ռեսուրսը (inferred) հանքային ռեսուրսի այն մասն է, որի համար օգտակար հանածոյի քանակն ու պարունակությունը կամ որակը գնահատվում են սահմանափակ երկրաբանական ապացույցների և ընտրանքի հիման վրա:

Նշված հանքային ռեսուրսը (indicated) հանքային ռեսուրսի այն մասն է, որի համար օգտակար հանածոյի քանակը, պարունակությունը կամ որակը, խտությունը, ձևը և ֆիզիկական բնութագրերը գնահատվում են բավարար վստահությամբ՝ թույլ տալով **փոփոխող գործոնների** բավարար մանրամասնեցված կիրառում հանքի պլանավորման և **հանքի շահագործման ծրագրի տնտեսական կենսունակության գնահատման համար**:

Չափված հանքային ռեսուրսը (measured) հանքային ռեսուրսի այն մասն է, որի համար օգտակար հանածոյի քանակը, պարունակությունը կամ որակը, խտությունը, ձևը և ֆիզիկական բնութագրերը գնահատվում են բավարար վստահությամբ՝ թույլ տալով փոփոխող գործոնների ամբողջական կիրառումը՝ հանքի մանրամասն պլանավորման և հանքի շահագործման ծրագրի տնտեսական կենսունակության վերջնական գնահատման համար:

Փոփոխող գործոնները (Modifying Factors) նկատառումներ են, որոնք օգտագործվում են հանքային ռեսուրսները հանքային պաշարների վերածելու համար: Դրանք ներառում են, բայց չեն սահմանափակվում հանքարդյունաբերության, վերամշակման, մետաղագործության, ենթակառուցվածքների, *տնտեսական*,


շուկայավարման, իրավական, բնապահպանական, սոցիալական և կառավարությանը վերաբերող գործոնները²⁹:

Հանքային պաշար (Mineral Reserve) - չափված և (կամ) նշված հանքային ռեսուրսի փնտրեսապես արդյունահանելի մասն է:

Հանքային պաշարները դրանք հանքային ռեսուրսների այն մասն են, որոնք արդյունահանման հետ առնչվող բոլոր գործոնների կիրառումից (հաշվի առնելուց) հետո, հանգեցնում են օգտակար հանածոյի գնահատված տոննաժի և պարունակության, որը գնահատում կատարող որակավորված մասնագետի կարծիքով, հանդիսանում է տնտեսապես կենսունակ արդյունահանման ծրագրի հիմքը՝ բոլոր փոփոխող գործոնները հաշվի առած:

CIMVAL-ի ստանդարտները սահմանում են, որ հանքային ռեսուրսների տնտեսապես կենսունակությունը վերաբերելի է միայն նշված և չափված կատեգորիաներին, ուստի և **հանքերի արժեքի** գնահատման ժամանակ որակավորված անձի կողմից վերցվում է միայն չափված (ամբողջությամբ) և նշված ռեսուրսները (ամբողջությամբ կամ մի մասը՝ կախված որակավորված անձի դատողություններից): Ընդ որում այդ երկու կատեգորիայի ռեսուրսներն էլ իրենց հերթին՝ կախված փոփոխող գործոնների կիրառության շրջանակից, կարող են արդյունահանելի պաշարների տեսանկյունից լինել հավանական (բավարար վստահությամբ կարելի է պնդել որ տվյալ պաշարը տնտեսապես արդյունահանելի է) կամ հաստատված (բարձր վստահությամբ կարելի է պնդել որ տվյալ պաշարը տնտեսապես արդյունահանելի է): Ասվածը սխեմատիկ ներկայացված է ստորև:

ՍԽԵՄԱ 1:



վարքագծից, վերջիններս կարող են հանգեցնել նշված և չափված ռեսուրսների տնտեսապես արդյունահանելի մասի կամ որ նույն է հանքային պաշարի ծավալի (տոննաժի) կրճատման կամ ավելացման: **Այս նյութի համատեքստում սա նշանակում է, որ արդյունահանման ծրագրի վրա բացասաբար ազդող փոփոխող գործոնների ազդեցությունը՝ այդ թվում հարկային ռեժիմների ծանրացումը, հանգեցնում են տնտեսապես արդյունահանելի հանքային ռեսուրսների (պաշարների) ծավալի կրճատման:**

Ինչ վերաբերում է հանքի արժեքի գնահատման մոտեցումներին, ապա այդ տեսանկյունից CIMVAL-ը տալիս է նաև տարբերակում հետևյալ հանքային գույքերի (ակտիվների) – mining property) միջև³⁰, որոնց նկատմամբ կիրառում է ֆինանսներում ընդունված արժեքների գնահատման³¹ տարբեր մոտեցումներ

Հետախուզական գույք – նշանակում է հանքային ակտիվ, որը ձեռք է բերվել կամ դեռևս ուսումնասիրվում է օգտակար հանածոների հանքավայրերում, բայց որոնց տնտեսական կենսունակությունը չի ապացուցվել:

Հանքային ռեսուրս համարվող գույք – նշանակում է հանքային ակտիվ, որը պարունակում է հանքային ռեսուրս, որի արդյունահանման տնտեսական կենսունակությունը չի ապացուցված տեխնիկատնտեսական հիմնավորմամբ կամ նախնական տեխնիկատնտեսական ուսումնասիրության միջոցով:

Այս խմբում կարող են ներառվել օրինակ նախկինում շահագործված հանքերը, ժամանակավորապես փակված կամ խնամքի և պահպանման կարգավիճակում գտնվող հանքավայրերը, նախնական տեխնիկատնտեսական ուսումնասիրության փուլում գտնվող հանքի շահագործման նախագծերը, հանքային ռեսուրսներ ունեցող տնտեսությունները, որոնք տնտեսապես կենսունակ կարող են դառնալ որոշ պայմանների բարելավման դեպքում (օրինակ օգտակար հանածոյի գների աճի կամ հարկման դրույքների նվազման պայմաններում) :

Զարգացման գույք – նշանակում է հանքային ակտիվ, որը պատրաստ է հանքարդյունման գործունեություն կազմակերպելու համար և որի համար տնտեսական կենսունակությունը ապացուցվել է տեխնիկատնտեսական հիմնավորմամբ կամ նախնական տեխնիկատնտեսական ուսումնասիրության միջոցով:

Արտադրական գույք – նշանակում է հանքային ակտիվ, որն ունի շահագործվող հանքավայր վերամշակման գործարանով կամ առանց դրա, որն ամբողջապես գործարկվել է և գտնվում է արտադրության պրոցեսում»:

³⁰ CIMVAL – Հանքային գույքերի գնահատման ստանդարտներ և ուղեցույցեր (Standards and Guidelines for Valuation of Mineral Properties 2003), Էջ 8- 11.

³¹ Ֆինանսներում՝ բիզնեսի կամ ակտիվի արժեքի գնահատման մի քանի մեթոդներ են առկա (valuation methods). 1. Եկամուտի կամ զեղչված կանխիկ հոսքերի մեթոդը (Income or Discounted Cash Flow-DCF method) 2. Շուկայական կամ եկամուտների բազմապատկիչ մեթոդը (market or earnings multipliers) 3. Ծախսային մեթոդը (cost method) 4. Շուկայի կապիտալիզացիայի մեթոդը (market capitalization) 5. Հաշվեկշառային արժեքի մեթոդը (Book value or balance sheet approach): CIMVAL-ը հանքերի արժեքի գնահատման համար հենվում է առաջին երեքի վրա:

CIMVAL-ի ստանդարտների համաձայն՝ ֆինանսներում ընդունված գնահատման այս կամ այն մեթոդի կիրառելիությունը որոշվում է նրանով թե հանքային գույքը (ակտիվը) զարգացման որ փուլում է գտնվում: Ստորև բերված աղյուսակը ամփոփում է տարբեր տեսակի հանքային գույքերի (ակտիվների) գնահատման համապատասխան մոտեցումների վերաբերյալ CIMVAL- ի ուղեցույցները:

Աղյուսակ 1. CIMVAL-ի Տարբեր Հանքային Գույքերի (ակտիվների) Արժեքի Գնահատման Ուղեցույցեր

Գնահատման մեթոդը	Հետախուզական գույք	Հանքային ռեսուրս համարվող գույք	Զարգացման գույք	Արտադրական գույք
Եկամտային կամ 243-DCF	Այո	Որոշ դեպքերում	Այո	Այո
Շուկայական	Այո	Այո	Այո	Այո
Ծախսային	Այո	Որոշ դեպքերում	Ոչ	Ոչ

Աղբյուր: CIMVAL Standards and Guidelines for Valuation of Mineral Properties 2003; էջ 22

Աղյուսակ 1-ը ցույց է տալիս, որ ըստ CIMVAL-ի ստանդարտների, շահագործման պատրաստ կամ շահագործվող հանքերի համար արժեքի գնահատման ծախսային մեթոդը կիրառելի չէ: Ընդ որում գործող պրակտիկայում որակավորված մասնագետները հանքերի արժեքի գնահատման ժամանակ ամենից շատ կիրառելի գնահատման մեթոդը եկամտային կամ զեղչված կանխիկ հոսքերի մեթոդն է, որը նաև ֆինանսներում ամենալայն կիրառություն ունեցող գնահատման մեթոդն է: Այդ մեթոդի կիրառության դեպքում դժվար չէ պատկերացնել, որ հարկերի բարձրացման արդյունքում հանքային պաշարների կրճատումը, ինչպես նաև ներդրողի տնօրինմանը մնացող ազատ կանխիկ հոսքերի կրճատումը (քանի որ կառավարությանը վճարվող մասնաբաժինը մեծանալու է ավելի բարձր հարկերի կամ տուրք հաշվին) հանգեցնելու են **հանքերի արժեքի էական նվազման**:

VII. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Analysis of Tax regimes: Comparative Analysis of Tax regimes of Land-Based Mining in 15 Countries» Report: For the International Seabed Authority By RMG Consulting - 2020
2. «Taxation, Royalties and Other Fiscal Measures Applied to the Non-Ferrous Metals Industry» December, 2013 ICSG-International Copper Study Group, ILZSG - International Lead and Zinc Study Group, INSG - International Nickel Study Group.
3. «The Taxation of Extractive Industries» James M. Otto, Published to Oxford Scholarship Online: November 2018
4. «Analysis of Armenia's mining fiscal regime», Matthew Genasci, Mining Policy Group, New York, U.S.A., AUA Center for responsible Mining, 2015
5. «Mining Royalties; A Global Study of Their Impact on Investors, Government, and Civil Society» World Bank, James Otto, Craig Andrews, Fred Cawood, Michael Doggett, Pietro Guj, Frank Stermole, John Stermole, and John Tilton
6. «Corporate income taxes, mining royalties and other mining taxes A summary of rates and rules in selected countries» PWC – Global Mining Industry Update 2012
7. CIM (2014) CIM Definition standards for mineral resources & mineral reserves. Canadian Institute of Mining, Metallurgy and Petroleum, Westmount Quebec. https://mrmr.cim.org/media/1128/cim-definition-standards_2014.pdf
8. Crowson, P (2011) Mineral reserves and future minerals availability, Miner Econ (2011) 24:1- 6. Mineral Economics. Available at: <https://doi.org/10.1007/s13563-011-0002-9>
9. Daniel, P., Keen, M. & McPherson C ed. (2010) The taxation of petroleum and minerals: principles, problems and practice. Routledge.
10. Daniel, P., Keen, M., Swistak, A. & Thuronyi, V. ed. (2017) International taxation and the extractive industries. Routledge.
11. Ericsson, M & Löf, O (2019) Mining's contribution to national economies between 1996 and 2016. Mineral Economics (2019) 32:223-250. Available at: <https://doi.org/10.1007/s13563-019-00191-6>
12. Hanappi, T. (2018), "Corporate Effective Tax Rates: Model Description and Results from 36 OECD and Non-OECD Countries", OECD Taxation Working Papers, No. 38, OECD Publishing, Paris. Available at: https://www.oecd-ilibrary.org/taxation/corporate-effective-tax-rates_a07f9958-en
13. ICMM (2009) Minerals taxation regimes – A review of issues and challenges in their design and application. International Council on Mining and Metals, London. Available

at: <https://www.icmm.com/website/publications/pdfs/social-and-economic-development/minerals-taxation-regimes>

14. Luca, Oana & Puyo, Diego Mesa (2016) Fiscal Analysis of Resources Industries (FARI) Methodology. International Monetary Fund, Fiscal Affairs Department. Available at: <https://www.imf.org/external/pubs/ft/tnm/2016/tnm1601.pdf>
15. Mullins, P & Burns, L (2016) The fiscal regime for deep sea mining in the Pacific region, *Marine Policy* 95 (2018) 337-345, Elsevier. Available at: <http://dx.doi.org/10.1016/j.marpol.2016.07.018>
16. OECD Corporate Tax Statistics Database. Available at: <https://www.oecd.org/tax/beps/corporate-tax-statistics-database.htm>
17. OECD (2019) Corporate Tax Statistics – first edition. OECD. Available at: <https://www.oecd.org/tax/tax-policy/corporate-tax-statistics-database-first-edition.pdf>
18. Otto, J (2017) The taxation of extractive industries, WIDER working paper WP2017/75. UNUWIDER, Helsinki. Available at: <https://www.wider.unu.edu/sites/default/files/wp2017-75.pdf>
19. Otto, J., Andrews, C., Cawood, F., Doggett, M., Guj, P., Stermole, F., Stermole, J. & Tilton, J. (2006) Mining royalties: a global study of their impact on investors, governments, and civil society, The International Bank for Reconstruction and Development / The World Bank, Washington, D.C. Available at: <http://documents.worldbank.org/curated/en/103171468161636902/pdf/372580Mining0r101OFFICIAL0USE0ONLY1.pdf>